„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolutionnaire Arménienne

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

## ՉԸ ՅԱՓՇՏԱԿՒԵՆՔ

Իւրաքանչիւր հայ—լինի յեղափոխական թէ խաղաղական—ուրախութեամբ կ'ողջունէ Բրիւսէլի կոնգրէսը, նրա որոշումները:

Pro Armenia-ի հիմնադրութիւնից յետոյ դա առաջին նշանաւոր փորձն է կենտրոնացնելու եւր-ական ուժերը եւ ստեղծելու խնդրոյ Հայերի միջազգային ամբողջական մի շարժում: Որքա՞ն կ'աջողուի այդ՝ ցոյց կըտայ ապագան: Շարժման գլուխ կանգնած անձնաւորութիւնները իրենց մասնաւոր բարոյական հեղինակութեամբ եւ միանգամայն հայասիրական դրդումներով մեծ մի երաշխաւորութիւն են, որ գործը աջող կ'երթայ:

Հարկ կա՞յ արդեօք մոռանալ, որ այդ գործը դեռ „բոլոր" գործը չէ... Շատ հեռու չերթանք մեր յա-յեղափոխութեան մէջ, չօրօրուենք պատրանքներով եւ մեր միամտութեան կրկին զոհ չերթանք: Մի կողմ դնենք 20 տարւայ պաշտօնական Եւրոպան, որ հմայուած էր եւ իրօք եղել էր ազատարարը բալկանեան սարուկ ազգերի: Մենք նրան գուրգուրեցինք, երկրպագեցինք. բայց նա մեզ զատուածներ եւ կոխկրտեց ամէն արդարութիւն, հակառակ մեզ, որ մենք էլ միակ փրկարար նրան էինք կարծում եւ մեր պարզ մտքով կանչում իրենց սրտակից ճակատագրին:

Այժմ մի երկրորդ կուռք ստեղծելու վրայ ենք. Կան եւ այժմ դաշտից դուրս գտնուող մեր հասարակութիւնը այժմ, կարծէք, տրամադրուած է հաւատալ, որ միջազգային հայասէր շարժումը մի պանացեա է, մի „հրաշագործ" հայկ. վէրքերին:

Մի նոր պաշտամունք. Մի երկրորդ կուռք, որ Կոստանդնուպօլսի Սուլթանը հեռու մարդ է, քան առաջինը, բայց որը գրաւել վտանգաւոր է: Մեր յուսախաբական լրագիրները, մեր անկեղծ ու կեղծաւոր խաղաղականները ստրկամտութեամբ գլուխ կը ծռեն այդ կուռքի առաջ եւ այսուհետեւ պէտք է աւելի յանդուգն ձեւ ամբաստանութիւն կը դնեն յեղափոխականների՝ „Ձեռքը ցած դրէք, մենք հանդիպածինք, Ֆրանսերէնը կը հոգայ, Բրիւսէլի Յանձնաժողովը ամէն ինչ կը կարգադրէ"...

Զգուշանանք, եթէ չենք ուզում միւսանգամ մատնուել ճակատագրի դաժան խաղերին:

Հայասէր շարժումը մեծ, սրտաշարժ երեւոյթ է մեր կեան-կացութեան մէջ—այդ մենք քանիցս շեշտել ենք արդէն: Եւրոպական պրօպագանդը անպայման անհրաժեշտ է թէ նոր ազգերի առաջն առնելու համար եւ թէ մեր դատը կենդանի պահելու դիւանագիտական սեղանի վրայ: Բայց սակ այդ պրօպագանդը անզօր է սանձելու դիւանատներում մեր խնդրի արմատական լուծման տեսակէտից նպաստաւոր տրամադրութիւն:

Սուլթանի վրայ ազդելու համար — ինչպէս իրաւամբ նկատեց կոնգրէսի անդամներից մինը — պէտք է ուժ գործ դնել: Կոնգրէսի որոշումները, դժբախտաբար, չեն համապատասխանում այդ ֆրանսիական պահանջին: Հայասէր շարժումը իր արդի կերպարանքով — յուսանք, որ հետզհետէ նա կը կերպարանափոխուի — անկարող է հրաւիրել այդ ուժ միջամտութիւն:

Եւրոպայի մեր բարեկամները ղրկել տուին Մուշ հիւպատոսական գործակալներ, եւ նրանց յորդորներով նորերը եւս կը ղրկեն հայրենիքի զանազան կողմերը: Մեծ վաստակ է դա ներկայ պայմաններում եւ վերին աստիճանի կազդուրիչ հանգամանք:

Սակայն մեր պարտքն է յիշեցնել նաեւ, որ այդ գործակալները չկարողացան օգնել, երբ 1895-ին արեան հեղեղները ողողում էին Մեծ Հայաստանը. մեր պարտքն է յիշեցնել, որ Եւրոպայի լիազօր ներկայացուցիչներն անգամ մազի չափ չօգնեցին, երբ իրենց աչքերի առջեւ հազարաւոր հայերի դիակներ փռւում էին Կ. Պօլսի սալայատակների վրայ:

Պատրաստ լինենք միշտ անհուր պատահականութիւնների համար. մի քիչ նուազ լաւատես, մի քիչ աւելի ռէալիստ ու գործնական լինենք. կրկնապատկենք եւրոպական պրօպագանդը, բայց աւելի եւս խրախուսենք բուն գործի պրօպագանդը հայրենիքում, առանց որի՝ չկայ հայկական դատ:

## ԲՐԻՒՍԷԼԻ ԿՈՆԳՐԷՍԸ

### ՔՒԷԱՐԿՒԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

I

ԿՈՆԳՐԷՍԸ՝

1) Համոզուած լինելով, որ Հայերի պահանջած րէֆորմներն ու երաշխիքները կարող են իրագործուել առանց բռնանալու Թիւրքիայի հողային ամբողջութեան վրայ.

2) որ Թիւրք ազգայնականութեան շահն իսկ պահանջում է՝ յարել բարենորոգման այդ գործին։

Յիշեցնում է Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի բնագիրը, որ է՝

«Բարձր Դուռը պարտաւորւում է անյապաղ իրագործել այն բարւոքումներն ու ռեֆորմները, որ պահանջում են հայաբնակ գաւառների տեղական պէտքերը, և երաշխաւորել հայերի ապահովութիւնը քրդերի ու չէրքէզների դէմ։ Նա պարբերաբար կը հաղորդէ դրա համար ձեռք առնուած միջոցները պետութիւններին, որոնք կը հսկեն նրանց գործադրութեան վրայ»։

Հաստատում է, որ այդ յօդուածով Եւրոպան իրաւունք է ստացել և ստանձնել է պարտաւորութիւն՝ պաշտպանելու հայ ազգաբնակութիւնների կեանքը, շրջագայելու ազատութիւնը, իրենց գոյքի խաղաղ տիրապետումը և խղճի ազատութիւնը.

Յայտարարում է, որ ժամանակ է, յանուն Եւրոպայի պատուի և մարդկութեան բարեկեցութեան, որ այդ յօդուածը ստանայ լիակատար և օրինաւոր գործադրութիւն.

Հրաւիրում է կառավարութիւններին ու ժողովուրդներին՝ գործել 1895-ի Մէմօրանդումի ոգով՝ համերաշխ միջամտութեամբ.

Եւ յանձնարարում է իր միջազգային Մշտական Յանձնաժողովին՝ կազմակերպել գործօն պրօպագանդա պառլամենտներում, մամուլի մէջ և հանրային կարծիքի շուրջը։

II

ԿՕՆԳՐԷՍԸ՝

Գոհունակութեամբ արձանագրելով Ֆրանսիայի և Ռուսաստանի ձեռք առած վերջին միջոցը՝ Հայաստանում իրենց հիւպատոսական գործակալների թիւը աւելացնելու համար, հրաւիրում է իր այն անդամներին, որոնք մասնակցութիւն ունին օրէնսդիր ժողովների մէջ՝ պահանջել իրենց կառավարութիւններից ձեռք առնել նոյնանման միջոցներ։

III

ԿՕՆԳՐԷՍԸ՝

Յանձնելով քուէարկած որոշումների բնագիրը եւրոպական մամուլին, յոյս է տածում, որ Եւրոպայի թերթերը արդարութեան ու մարդկայնութեան նկատումով՝ ամենալայն և ամենասիրայօժար հրատարակութեան կը տան Հայաստանից եկած լուրերը, որոնք նրան կը հաղորդուին Մշտական Յանձնաժողովից։

Մի շրջաբերական կ'ուղղէ եւրոպական լրագիրների սեփականատէր-հրատարակիչներին, և Մշտական Յանձնաժողովը առաջիկայ Կօնգրէսին հաշիւ կը ներկայացնէ, թէ ինչպիսի ընդունելութիւն են արել այդ լրագիրները հաղորդուած լուրերին։

—

(Կօնգրէսի ճառախօսութիւնները կը տանք „Թռուցիկի" յաւելուածում)։

# ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Սասունի մեր ընկերներից վերջին օրերս ստացանք մի շարք ա ն հ ա ն գ ս տ ա ց ն ո ղ նամակներ. Ահա թէ ինչպէս է ներկայացնում դրութիւնը մի հ ե ռ ա գ ի ր, որ մենք ստացանք օգոստոսի 7-ին, Թաւրիզի վրայով, վստահելի աղբիւրից։

„Մ ո ւ շ ի  կ ա ռ ա վ ա ր ո ւ թ ի ւ ն ը  ո ւ ղ ա ր կ ե ց  դ է պ ի  Ս ա ս ո ւ ն ի  շ ր ջ ա կ ա յ ք ը  հ ի ն գ  վ ա շ տ  զ օ ր ք։ Հ ր ա մ ա ն  է  տ ր ո ւ ա ծ  ք ի ւ ր դ  ա շ ի ր ա թ ն ե ր ի ն, ա մ ա ռ ո ւ ա յ  ա մ ի ս ն ե ր ի ն  Ս ա ս ո ւ ն  ա ն ց ն ե լ ի ս  գ ա լ  ա ռ ա ն ց  ի ր ե ն ց  ը ն տ ա ն ի ք ն ե ր ի։ Հ ա ղ ո ր դ ա կ ց ո ւ թ ի ւ ն ը  Մ ո ւ շ ի  և  Ս ա ս ո ւ ն ի  մ ի ջ և  ը ն դ հ ա տ ո ւ ա ծ  է։ Յ ո ւ զ մ ո ւ ն ք ը  մ ե ծ  է"։

# ԴՐԻՉԸ ՔԱՂԱՔԱԳԷՏՆԵՐԻ ՁԵՌՔՈՒՄ

Գուրտէնի բարձունքից Աարի խաղաղ կոհակները դիտող հսկայական շինութեան մէջ,—Հելվետական դաշնակցութեան պալատն է դա,—կրծքին ժապաւինազարդ գրիչը, փայփայած Բեռնի հասարակութեան սրտագին հիւրասիրութեամբ, գրչի զինուորները խորհրդաւոր նիստեր էին կազմում։

Մ ա մ ո ւ լ ի միջազգային կօնգրէսն է դա։

Որքա՜ն գեղեցիկ է այդ խօսքը։ Ընկեր, ձեռքին զէնքերից ամենաազնիւը, սիրով յուզուած հասարակական ցաւերով, կանգնած մի ամբիոնի վրայ, որ խօսում է մարդոց ականջին աշխարհի բոլոր ծայրերում, նա կռւում է ռազմիկ ա ն ց ե ա լ ի նախապաշարումների դէմ, ազ-դ ա ն շ ա ն օրւայ չարիքների, անկաշառ պ ա շ տ պ ա ն արդարութեան, տարածող ժողովրդական մեծ մտքերի։

Եւ որպիսի երջանիկ ծնունդ.—համախմբուած այն երկրի կենտրոնում, որ իր ամբողջութեան մէջ ամենամեծն է — փ ո ք ր ի կ  մ ե ծ  Շ վ է յ ց ա ր ի ա ասում են պարծանքով Ցէլլի հայրենակիցները,—բազմած մի շինութեան մէջ, որ եթէ ամենագեղեցիկը չէ ամբողջ Եւրոպայում, բայց ամենաերջանիկն է. իրենց տրամադրութեան տակ օրգաններ, որոնք ց ե ն զ օ ր չեն ճանաչում. հեռագիր, որ ենթակայ չէ ոստիկանական ոչ մի արգելքի. եկած Եապոնիայից, Ամերիկայից՝ ներկայացուցիչ Եւրոպայի բոլոր փոքր իշխան կարևոր քաղաքների, թւով աւելի քան երեք հարիւր, նրանք հրաշքներ կարող էին գործել, հրաշքներ իրական, վճռական, բաժին...

Սակայն մինչև ոսկորը ծծուած քաղաքագիտական նրբութիւններով, որ պարզօրէն ոչ այլ ինչ է, եթէ ոչ ե ր կ չ ո տ ո ւ թ ի ւ ն և խ ո ր ա մ ա ն կ ո ւ թ ի ւ ն, դրանք, այդ անձնիրանի և անպաշտօն դիւանագէտները, այնքա՜ն եռանդագին աստղաբաշխային, պրօֆէսիօնալ փոքրիկ շահերին յարակից խնդիրներում, այնքա՜ն նրբազգաց, երբ կարգապահիչ կոմիտէն առնում էր մէկ վէրօանդ կամ ինչ-որ գեղանկարչական գաղափարին կամ զմայլելի ամփերին, այլակերպւում, կծկւում, դառնում էին անճանաչելի, ստրուկ իրենց նեղ կանոնադրութեան, երբ պէտք էր մէկ բ ռ ն ո ւ թ ե ա ն՝ միջազգային բռնապետութեան դէմ, կամ մէկ ճ շ մ ա ր տ ո ւ թ ե ա ն՝ դժբախտ ազգերի առօրեայ ցաւերի մասին...

„Մենք քաղաքական հնարներով չենք զբաղւում“ — պէտք է համարել կոնգրէսի նշանաբանը, ահա նրա անդամներից ամէն մէկի պատմելը, արդարացման ամենահեշտ, բայց և ամենաանխիղճ ձևը: „Եթէ կամենաք, ես հրաժարւած Հայաստան կերթամ, կռւելու նրա ազատութեան համար, բայց այստեղ՝ կոնգրէսի մէջ, եթէ հարցը դրւի միմիայն համակրութեան՝ դիմադրութիւն կը ցոյց տամ“ այսպէս ասաց Փրանսիացի մի ժուռնալիստ իր „քաղաքագիտական“ ոգևորութեան բոպէին:

Ինչու՞ նրա համար, փաստաբանում են անպաշտօն դիպլօմատները, որ եթէ այսօր պաշտօնապէս յարուցանենք Հայոց հարցը, վաղը՝ կըգայ լեհականը, մի այլ անգամ՝ ֆինլանդական խնդիրը, մի ուրիշ օր բօէրական կամ նոյնիսկ Ալզաս-Լօտարինգեան հարցը և այդ բոլորից ոչինչ չի ծագի, բայց թէ պայքար, կռիւ, թշնամութիւններ և խմբովին ամբողջ կոնգրէսի ոչնչացումը:

Կասկածելի ակնածանքով, թշնամութեան և քայքայման առաջն առնելու համար կոնգրէսի անդամները ուխտ տարուց իրար — VIII-րդ կոնգրէսն է աս — չեն արծարծել և չեն քննում այն ճանապարհը, որ տանում է մարդոց դէպի համերաշխութիւն, ոչ թէ զգացմունքները և մտքերը թաքցնելով, այլ խոնարհելով մի արդարութեան առաջ, որ յաւիտենական է, որ չի ճանաչում ազգային և պետական սահմաններ, որ ընդունում է հայի համար անկախ կեանքի նոյն իրաւունքները ինչ Թիւրքի համար, որ շնորհում է Ֆինհացուն նոյնը, ինչ գերմանացուն, որի համար Ֆինլանդիան նոյնքան թանկ է, որքան Իռլանդիան, կամ որ արտօնում է բօէր ժողովրդին նոյնը, ինչ անգլիացիներին:

1900 թւականին սոցիալիստական համաժողովում Անգլիացի անդամները, վերուսելով միմիայն, իրենց ձայնը միացրին Ֆրանսիացի և գերմանացի ընկերների բողոքին ընդդէմ բրիտանական կառավարութեան արարքների Տրանսվալում: Եւ եթէ մի օր սոցիալիստական մի այլ ժողովում գերմանացիները նոյն անկեղծութեամբ չեն միանայ իրենց Ֆրանսիացի ընկերների հետ՝ բողոք տալու այն խժդժութեան դէմ, որ կատարւում է գերմանիան Ալզասում կամ Լեհաստանում, նրանք կը համարւին և պէտք է համարւին նեղմտամիտ շովինիստներ, որոնք դաւանում են արդարութեան „երկու չափ-երկու կշիռ“: Եթէ միջազգային սոցիալիստների ամէն համաժողովում, համերաշխութեան միակ պատւանդանը պէտք է լինի ք ա ղ ա ք ա կ ա ն հ ա ր ց ե ր ի ց խ ո ւ ս ա փ ե լ ը, այն վիրաւոր սնանէմը, որ թշնամութիւն չյարուցանելու համար լռում է անխտիր բոլոր այդպիսի խնդիրներից, քննադատը իրաւունք կ'ունենայ բացարձակ ասելու, որ դա դիպլօմատ-սօցիալիստների, խաբողների և երկչոտ մտածողների մի ժողով է, անզօր ըմբռնելու բարձրագոյն արդարութեան գաղափարը:

Այդպէս էր ամենալի կոնգրէսը: Նոյն այն մարդիկ, որոնք ամբողջ ժամերով քննում և պարզաբանում էին մի օր լեհական խնդիրը, միւս օր՝ Հայոց հարցը, մի այլ անգամ՝ ֆինլանդական կամ թիւրքիայի խնդիրը, նոյն այդ մարդիկ քաջութիւն չունեցան միևնոյն հարցերի մասին կարծիք յայտնելու իրենց հ ր ա պ ա ր ա կ ա կ ա ն, համագումար ժողովում, վերջէ ամփոփումն այն հայեացքների, որ արտայայտւած են անթիւ օրգաններում և զանազան երկրների մէջ: Աւելին: Մամուլի պատւի խնդիրը քննելիս մոռացան, թէ ամպագրական խօսքի վ ա ր կ ա բ ե կ ո ղ ը ծայրը հնդկական տ ա ր ի ֆ ը չէ և ոչ էլ միլիոնների ոճը, այլ այն, օրինակ, որ մի շարք լրագիրներ, նոյնիսկ շատ ազդեցիկ, երեկ հրապարակ գալով Հայոց հարցի ոգևորւած պաշտպաններ, այժմ դարձել են թուրքական չինովնիկ, պաշտպաններ „Մեծ Մարդասպանի“: Կամ ուրիշները, կաշառւած, կամ գրաււած ուրիշ միևնոյն տրութիւնից, ունեն կ ա պ ի տ ա լ ի ս տ ի ց, գրիչը դարձել է վաճառքի առարկայ, ասուսփացնելու հրապարակային գործութիւնները և ձնշումներին ինչ արժէ մէջտեղ բերել ծնունդների...

Ինչու լռեցին այս մասին:

Դաշնակցական պալատի մէջ գրչի զինւորները, աւա՜ղ, այս անգամ էլ դաւաճանեցին: Կեղծիքը բռնեց համերաշխութեան տեղը: Երկրայայտելով համակրանք Մարտինիկի զոհերին, Համբուրգի կամ Պետերբուրգի կամ Վենետիկեան արկածին, գրչի մարդիկ ուղեցին հաւատացնել որ նրանք մշակում են ազգերի համերաշխութեան անդաստանը, որ նրանք ծառայում են միջազգային արդարութեան գործին, մոռացած որ ազգերի ցաւակցութեան և համերաշխութեան կրակներ իրենցից առաջ և աւելի տաժգին կերպով ուղեցին թագաւորները, և նրանց սպասաւոր մինիստրները, նրանք, որոնց ամբողջ ուժը կենտրոնացած է ազգերի թէև խուլ բայց խոր թշնամանքի վրայ:

Պայմանական լռութեան և դասակարգային ... հերի նեղ պաշտպանութեան մէջ չէ մամուլի ուժը, որքա՜ն գովաբանւած՝ ամէն ժամանակ և բոլոր շրջաններում: Այդ ուժը՝ անկախ, ներքին համերաշխութեան մէջն է, որ թելադրում է նոյն գաղափարը, նոյն նպատակը, ձգտումների նոյն վախճանը: Չկար գաղափարի այդ համերաշխութիւնը Բեռնի կոնգրէսում, այլ դրա փոխարէն մի ինչ որ անորոշութ, բայց խիստ ս ա ն ձ, դրած գրչի մարդոց բերաններին, յանուն միմիայն քաղաքավարութեան, յանուն խաղաղութեան: Եւ այն մարդիկ, որոնց ձեռքումն են այդ սանձի ծայրերը սովորում են մտածելով, թէ մի օր, մէկ կամ մի քանի „խենթերի“ շնորհիւ կը ժայթքի փակւած անդունդի մէջ „քաղաքական խնդիրների“ անունն է կրում, ցոյց տալու թէ որքա՜ն արհեստական, որքան շինծու, որքա՜ն փխրուն է այն համերաշխութիւնը, որ հիմնւած է միմիայն արտաքին պայմանական լռութեան վրայ, մի ցաւագար լռութիւն, որ պահանջւում է թաքցնել ամէնախոր վէրքերը, ամենաթանկագին իղձերը...

Ահա մի յեհայի, բացւած կոնգրէսի աթոռներից մէկի վրայ. նա պիտի ճառեր լսի, ճաշեր պարտիզին, անդամ տակ, սակայն ինքը մի բառ անգամ չպիտի արտասանի այն հայրենիքի մասին, որ այրւում է և իր հետ միասին այրում իր պզտիկ պաւակներին:

Ահա ազատ խօսքի մի սիրահար, բազմած մի այլ աթոռի վրայ: Հնչում են նրա ականջին գեղեցիկ հրաւէրներ՝ լինելիք ճաշերի և պըօմանքիների մասին, բայց և ոչ մի խօսք՝ սարկացած գրչի մասին, որ այնքա՜ն տարի հեծում է գրաքննական և վարչական կապանքների տակ խեղդւած ամբողջ ժողովրդի:

Ահա մի հայ, որ ճառերի ամբողջ տարափ է կրում իր ականջների վրայ յանուն գրչի անկախութեան, յանուն ճշմարտութեան, բայց որը հ ա ս ր ա թ է մնում մի բառ անգամ լսելու, երբ այդ ճշմարտութիւնը վերաբերում է այն երկրին, որ հեղեղւած է արիւնով և ծածկւած անմեղների յօշոտւած դիակներով:

Եւ մի Ֆր, երբ աշխարհի բոլոր ծայրերից եկած մարդիկ,

մամուլի զինուորները կամ կ'ունենան կամ թոյլ կը տրւի խօսել իրենց առողջութեան, ճնշող ինչպէս ցաւերի մասին, երբ ուզում կը կարդացնէ երկրի վէրքերը, հայը իր հայրենիքի դարդերը, լռեցին իր քաղաքական անհունա ազատասէր անդրանիկին, ամբողջական դժբախտութիւն, անկախ փրկութիւնին իրենց նկբքին կամ արտաքին ցաւերը, և վերջ այդ բախտաւոր օրը մինչդեռ ազգութիւն է տարբեր երկրներին կուսակցութ մարդիկ, տարած նոյն աւելորդութեամբ և պատճառներով, կը յարին այս կամ այն բողոքին ու հրաւէրին առանց ազգայնական խտրութեան, բողոքելով նոյնիսկ սեփական երկրի դէմ, եթէ այդպէս է պահանջում բ ա ր ձ ր արդարութիւնը — այդ օրը միայն՞ առաջ՝ ինք, մենք կ'ունենանք բարոյական այն մեծ ուժը որը հարկաւոր պիտի լինի միջազգային մամուլի կոնգրեսը, բայց որից նա այժմ կատարելապէս զուրկ է, հերու:

Չնայած Կրեսին կայ մի հարց — հ ա յ ո ց հ ա ր ց ը է նրա մասին — որը իրօք քաղաքական ցնորքների խնդիր չէ, այլ քուլտուրական մի ժողովրդի գոյութեան խնդիր մի հարց, որ իր ողբերգական բովանդակութեամբ, արեան և ցաւերի քանակով պիտի մնային գործի նկատմամբ որոնք դաւանում են արդարութեան և ճշմարտութեան սկզբունքը, մի դժբախտ հարց, որ մինչև այժմ փակւած մամուլի միջազգային կոնգրեսում 1900 թւին. որը պ ա շ տ օ ն ա պ է ս ընդունուեց Բեռնի այդ ժողովում կոնգրեսում և նոյն ժամանակ պ ա շ տ օ ն ա պ է ս մի քանի տարւայ մամուլի կոնգրեսում որ կատարւեցաւ այս Ամերիկայում: Պաշտօնական, հրապարակային, միաձայն համակրութեան փոխարէն, կոնգրեսի անդամները — և գլխաւորապէս — լոկ մասնաւոր, ա ն պ ա շ տ օ ն կերպով իրենց բարեհաճ տրամադրութիւնը յայտնեցին մի թղթի. որ այնքան արիւն է թափւել որքան այդ բոլոր փոքրիկ վերջին թանաք:

Ուրեմն հետևանք չէ արդեօք այդ՝ դէպի այն մամուլին որի պատասխանութիւնը ձեռք բերելու համար հերոս նախադրեալը նոյնպէս պիտի կը ուել դէպի այն հիւրասէր երկիրը, որ կենդանացրեց ա կ ա դ է մ ի ա ն [illegible] վերջում դիպլոմատ փրկութիւնը՝ զ արթնութեան ապէներին դէպի նոյնիսկ այն մեծախոհութեան ձեռքը — [illegible] էին ժողովներ — որը անծածուկ և [illegible] ցրւած է ու թէ [illegible] ձագերով, այդ ազատութեան համար ամէն պատրաստւում կռւող և բազմաթիւ ռազմիկների արեան արցունքով:

Իսկ եթէ ք ր ի ս տ ո ն է ա ն մամուլը ընդունակ է մոռանալ այդ ծայրահեղ [illegible] թ ի ւ ն ը, այդ վրդովիչ, ապականող լռութեան նպատակով ձեռ, վստահ ենք՝ այդ չի մարի վ ա ղ ո ւ ա ն մամուլը, որ անցնելի նախատինք պիտի համարի այս բոլորը իր անցած պատմութեան էջերում:

Սակայն երբ պիտի գայ այդ փառքը պատմական բացարձակ [illegible] բողոքի ցանկալի օրը

## ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ցարի լայնարձակ կայսրութիւնը այնպիսի վայրկեաններ է ապրում, որ կարծես հեռու չէ, ինչպէս գերմանացիք ասում են, մեծ „կլադդերադաչի“ օրը. Արդէն նշանակալից մի փաստ էր դիտւում այն հանգամանքը, որ վերջին տարիներում յեղափոխական ինտելիգենցիային միանում էր փորձառու աջակցութեամբ մեծ քաղաքների բանւոր դասակարգը: Այժմ մի նոր տարր է հրապարակ գալիս, ամենածանրակշիռը և ամենաահաւորը: Դա գ ի ւ ղ ա ց ի ո ւ թ ի ւ ն ն է:

Այդ հսկայ, ինչպէս և գերազանցապէս պահպանողական ուժը միապետութեան ամուր պատուանդանն էր: Ռուս ինտելիգենցիայի, յեղափոխական այդ չնչին փոքրամասնութեան գերմարդկային ճիգերը խորտակւում էին միշտ գիւղացիութեան անսասան ապառաժին հանդիպելով:

Ուսանողը, ինտելիգենտը հալածւում էր գիւղացու, իբրև վնասակար, աղետաբեր ուժ, իբրև թշնամի այն Կ ի ս ա ս տ ո ւ ա ծ ի, որի առջև մուժիկը ծնկի էր չոքում կրօնական երկիւղածութեամբ: Ռուս յեղափոխականներից ոմանք ծայրայեղօրէն սկեպտիկ էին դարձել և կարծում էին, որ հակայեղափոխական մուժիկը այն ժամանակ միայն կարող է շարժւել, երբ հանդէս կը գայ տարերային մի ուժ, համատարած մի սով կամ մի պատերազմ:

Այսօր բոլորովին փոխւած է երևում դրութիւնը: Անշարժ և անբան գիւղացին սկսում է խօսել. նրա վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, համակրական է դէպի ուսանողը: Նա սիրով դիմաւորում է նրա քարոզին և ջերմ հետաքրքրութեամբ կարդում է նրա տարածած բրօշիւրները: Նա ինքը այժմ շատ տեղերում գրկում է ապստամբութեան դրօշը՝ տարտամ գիտակցութեամբ՝ որ այդ ապստամբութիւնը բարիք կը բերէ իր թշւառ, կիսաանասնական կենցաղին:

Կայսրութեան զանազան ծայրերից ազդարարում են գիւղացիների մասսային շարժումների մասին: Նրանք գրաւում են խոշոր կալւածատէրերի հողերը, թալանում ու հրդեհում են նրանց ագարակները: Հանգամանքը վերին աստիճանի նշանակիչ է. այդպիսի հրդեհներով են սկսւել բուրժուազական մեծ յեղափոխութիւնները Արևմուտքում:

Գիւղացիական շարժման ալիքները հեղեղել են հարաւային Ռուսաստանի մի շարք նահանգներ — Պօլտավի, Խարկովի, Կիևի, Չերնիգովի, Վօրօնեժի, Տամբովի, Սարատովի ևլն: Շարժումները նման են ամէն տեղ. գիւղացիք ահագին խմբերով (մի քանի հազարներ ամէն մի խմբի մէջ) մօտենում են կալւածատիրոջ ագարակին, պահանջում են նրանից ամբողջ ընտանիքով թողնել ու հեռանալ: Կալւածատէրը սարսափած փախչում է, գիւղացիք բաժանում են իրար մէջ հացը, նախիրը և ուրիշ պիտանի գոյքերը. մնացածը աւերում են, տունը հրդեհում և այնպէս գնում: Մարդկանց կեանքի վրայ բնաւ չեն բռնանում. ամենաատւած հողատէրերն անգամ խնայւում են:

Յուզումները քանի գնում տարածւում են, և նրանց անմիջական պատճառների վրայ հարիւրաւոր այլանդակ առասպելներ են շրջում: Ասում են, օրինակ, որ գիւղերի մէջ սպայի համազգեստով պտտում էր մի անյայտ անձնաւորութիւն և կարդում էր մի մանիֆեստ, որով գիւղացիք հրաւիրւում էին խլել հողերը: Ուրիշ մի առասպել ասում էր, թէ իբր Նիկոլայ II արտասահման է փախել և թէ այժմ թագաւորը Միխայիլը հրաման է տւել գիւղացիներին գրաւել հողերը, որ հէնց իրենց սեփականութիւնն է:

Այդ նոր, չտեսնւած փոթորիկների հանդէպ՝ ռեակ-

ցիան՝ ինչպէս, սահման չի ճանաչում իր կոյր մոլեգնութեան մէջ: Սարսափելի են ճնշման միջոցները. ամենայ ծեծում են նագայկաներով, չեն խնայում ծերերին, կանանց ու երեխաներին: Հոտեցից ազատուելու համար շատերը նախընտրում են կախաղանը: Գիւղացիների դիմադրութիւնը առայժմ կրաւորական է. նրանք մերժում են, երբ հրամայում են նրանց ցրուել: Մի քանի այդպիսի դէպքերում զօրքը պարպել է հրացանները և շատերին սպանել: Կօզակները վարւում են ճիշդ բրդերի պէս. գիւղացիներին ամենաանսիրտ կերպով մտրակահարելով՝ նրանք միաժամանակ թալանում են գիւղերը և բռնաբարում կանանց:

Ծեծի սիստէմն է այսօր թագաւորում ամբողջ Ռուսաստանում. ծեծում են՝ յաճախ մինչև մահ...

Սպանուած Սիպիագինին յաջորդելով՝ մինիստր Պլեվէ կամեցաւ մի ահարկու հնարուածով կանգնեցնել յեղափոխական շարժման սլացքը: Բայց և շուտով, ըստ երևոյթին, համոզուեց, որ տէռօրի սիստէմը այնքան ալ ձեռնտու չէ մտքերը խաղաղացնելու տեսակէտից: Դրա մէջ համոզուած է երևում՝ միւսը կայսրը: Եւ ահա արդէն լուր է պտտում, թէ Նիկօլայ II, վճռելով որոշ ազատութիւն շնորհել իր հպատակներին, ցանկութիւն է յայտնել՝ քննել Սահմանադրութեան այն նախագիծը, որ մշակել է Լօրիս Մելիքօվ, 1880-ին, բոլորովին նման պայմանների մէջ...

## „ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ" ՇՈՒՐՋ

„Եւրոպայի հայ ուսանողական Միութիւնը" ուղղել է մի շրջաբերական-կոչ, ֆրանսերէն լեզուով. Մամուլի 8-րդ միջազգային կոնգրէսին, որ տեղի ունեցաւ Բեռնում յուլիսի 20-24:

Ուրուագծելով հայ մամուլի 100-ամեայ պատմութիւնը, շրջաբերականը ծանրանում է այդ մամուլի ներկայ տխուր, անօրմալ վիճակի վրայ, որ անհրաժեշտ հետևանք է հայրենիքում տիրող քաղաքական պայմանների: Շեշտում է այն մեծ ու ստիպողական պարտաւորութիւնները, որ ունի համաշխարհային մամուլը հայկական ճգնաժամի դիմաց, յիշեցնում է լռութեան այն դաւադրութիւնը, որ եւրոպական խոշոր օրգանները կազմակերպել էին հայոց կոտորածների միջոցին և հրաւիրում է միջազգային մամուլի ներկայացուցիչներին՝ յանուն մարդկայնութեան սկսել մի ուժեղ պրոպագանդ բոլոր երկրներում ի նպաստ հայ դատի:

„Աջակցելով հայ ժողովրդի ազատագրութեան՝ բոլոր երկրների անկախ մամուլը կը նպաստէ մի հզօր ու ազատ մամուլի ստեղծման մեր հայրենիքում, որի կոչումը կը լինի՝ տարածել արևմտեան քաղաքակրթութիւնը ամբողջ առաջաւոր Ասիայում":

Կոչը հարկաւոր օրինակներով բաժանուել է Բեռնի ժողովականներին, ինչպէս նաև զանազան երկրների լրագիրներին, որոնցից շատերը տպագրեցին այդ շրջաբերականը ամբողջապէս, համակրական ծանօթութիւններով:

Կոնգրէսի վարիչ Յանձնաժողովը յայտնեց Միութեան պատգամաւորին — որը անձամբ ներկայ էր — թէ չնայած իր բուռն համակրութեան, նա պաշտօնապէս չէ կարող քննութեան դնել հայկական հարցը, իբրև միանգամայն քաղաքական հարց:

Սակայն կոնգրէսի անկախ անդամները, իբրև քաւութիւն այդ մեղքի՝ որոշեցին անպաշտօն կերպով յայտնել իրենց համակրանքը հայկական դատին: Տիկին Սեվերինի նախաձեռնութեամբ՝ դահլիճում սկսեց շրջել ստորագրութեան մի թերթ մօտաւորապէս հետևեալ բանաձևով. „Մենք բոլոր երկրների հրապարակախօսներս, յայտնում ենք մեր բաղձանքը, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը Հայաստանի մէջ գործադրուելով՝ հայ ժողովրդին տայ ապահովութիւն կեանքի ու ստացուածքի":

Ստորագրեցին 200-ի չափ գրողներ այլևայլ երկրներից: Ձեռնպահ մնացողները մեծ մասամբ գերմանացիներ էին:

Ստորագրելով այդ բանաձևը՝ մի շարք նշանաւոր հրապարակախօսներ յանձն առան իրենց օրգանների մէջ պաշտպանել հայկական ռեֆօրմների հարցը ջերմ ու սիստեմատիկ կերպով:

Աւելացնենք և այն, որ կոնգրէսիստներից մի քանիսը իրենց երախտագիտութեան հետ միասին յանձնեցին տիկին Սեվերինին գեղարուեստական նուէրներ՝ ի նպաստ հայասէր պրոպագանդին.

## ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ

*Բեռնի միջազգային խաղաղութեան մշտական Բիւրօն հետևեալ յիշատակագիրն է ղրկել Մայիսեան մեմօրանդումը ստորագրող պետութիւնների — Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի — արտաքին գործերի մինիստրներին:*

Ձերդ գերազանցութիւն՛

1901 թ. հոկտեմբեր 3-ին մեր բիւրօն ի կատար ածելով Խաղաղութեան X-րդ համաշխարհային կոնգրէսի մի որոշումը՝ թոյլ էր տուել իրեն Ձեր կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել հայ ազգաբնակութեան թշուառ վիճակի վրայ: Մենք ձեզ առաջարկում էինք յարգանօք գումարել մի պաշտօնական խորհրդաժողով և լուծել այդ խնդիրը գործադրելով ռեֆօրմների այն նախագիծը, որ մշակուել էր 1895-ի մայիսին անգլիական, ֆրանսիական և ռուսական կառավարութիւնների ձեռքով և որ հաստատուել էր սուլթանից:

Այն ժամանակից իվեր դրութիւնը բնաւ չի փոխուել և նոր կոտորածների երկիւղ կայ մանաւանդ Սասունի շրջանում:

Այս հանգամանքների մէջ թախանձանօք խնդրում ենք Ձեր Գերազանցութեանը՝ լուրջ ուշադրութեան առնել 1901 թ. հոկտեմբեր 3-ի մեր յիշատակագիրը, որ Խաղաղութեան XI-րդ համաշխարհային կոնգրէսը յանձնարարել է մեզ նորոգել ձեր կառավարութեան առջև՝ աղաչելով Ձեզ, իբրև առաջին քայլ համաձայնութեան դէպի Բեռլինի դաշնագիրը ստորագրող միւս կառավարութիւնների հետ, որպէս զի Սասունին ամենից մօտ գտնուող Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հիւպատոսները ուղարկեն Մուշ, քանի որ միմիայն եւրոպական պաշտօնական վկաների ներկայութիւնը կարող է արգելել այն արիւնոտ դէպքերի կրկնումը, որոնք յաճախուցին ընդհանուր ցաւով:

Պատիւ ունինք յայտնելու ձեզ և այլն.

Նախագահ — ՖՐԵԴ. ԲԱՅԵՐ

Պատուաւոր քարտուղար — ԷԼԻ ԴԻԿՕՄԵՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

## ՆԱՄԱԿ ԱԽԼԱԹԷՆ

10 Մայիս 1902

Քանի տարիներէ վեր Ախլաթի գաւառակը զրկուելով յեղափոխական գործող ուժերէ, մնացեր է բոլորովին լուռ իր թշուառութեանց առջև, կը տքայ իր դժոխային տանջանաց մէջ։ Անդամ Սերոբ այս կողմերէն հեռանալէ յետոյ կառավարութիւնը խուզարկութեան պաշտօնը կը յանձնէ չէրքէզ Ալի պէյին, որ ստորիկանութեամբ հաւքիւրապետ է և նշանաւոր իր անօրինակ գազանութիւններով։ Ալի պէյը իր հետ ունենալով զօրաց բազմութիւն մը, աննկարագրելի տանջանքներ ի գործ կը դնէ։ Փայտերու հարուածներու տակ շատերը մեռնիլ, շատերու ամօթոյքը ոլորել, ամորձիքները թելերով կապել, քաշքշել և լեռնէ լեռ անամօթաբար պտտցնել, հայ կիներ ու հարսներ զօրաց ու խուժանի առջև յայտնի լլկել, կանանց ներքնազգեստներու մէջ կատու ձգելով ծեծել, հայերու ձեռքէն մինչև անգամ դանակներ խլել, վերջապէս այսպէս և աւելի քստմնելի արարքներ կատարելը այնքան սովորական ու բնական դարձած իրողութիւններ եղած են որ, ժողովուրդը այն համոզումը գոյացուցած է թէ, այդ է իր անողոք ճակատագիրը, այդպէս պէտք է լինի իր կեանքի դատավճիռը, սակայն մենք կ'ամչնանք ու կը սարսռինք մանրամասնութեանց մէջ մտնելէ ու զայն նկարագրելէ։ Այդ բոլորը Ախլաթի ժողովրդի վրայ այնպիսի տպաւորութիւն մը թողած է որ այժմս ալ, թէև Ալի պէյ, զօրք, կառավարութիւն, անունները ահ ու սարսափ կ'ազդեն։ Թէև կայ արդէն թագուն կայծ մը, կայ ներկայ դրութեան վերջակէտ մը դնելու տենչանքը ժողովրդի սրտի խորքը, սակայն ի՞նչ ընէ այդ ժողովուրդը, երբ ամէն միջոցներէ զրկուած է տնտեսապէս բոլորովին քայքայուած, ինքնապաշտպանութեան ամէն միջոցներէ զրկուած, կառավարչական ինտրիգներու բոլոր թելերով կաշկանդուած ու ստրկացած։ Մենք՝ ինկատի ունենալով այս դառն կեանքի բոլոր պայմանները կը վճռենք՝ այս վիճակի միակ ելքն է յեղափոխական անդուլ, անխոնջ և լուրջ գործունէութիւնը։

Աշնան Բուլանըգի կողմէ խումբ մը համիդիէ ձիաւորներ անցնելով կողմերս, օրը ցերեկով աւարի կ'առնեն Շխմրամ հայ գիւղէն 36, Ջրհոր գիւղէն 31 եզներ։ Հայ գիւղացիք կին ու զաւակներով կը վազեն, կը հասնին աւազակներուն, կ'աղաչեն, կը պաղատին ըսելով. „գթացէք սէր Աստուծոյ, մի մեռցնէք մէկ անգամէն մեր երեխաները, գէթ կէսը տարէք, մնացած կէսը թողուցէք մեզ", սակայն քրդերը հեգնականածիծաղով մը՝ „ո՞ւր են ձեր փէդայիները, թող գան կռուեն, վերադարձնեն" կ'ըսեն։ Այժմս կըստուգուի որ այդ աւազակութիւնները կառավարութեան բացարձակ հրահանգներով կատարուած են, հասկցնելու համար թէ կա՞ն այդ կողմեր ֆէդայիներ, կամ ժողովուրդը արդեօք ունի՞ զէնքի կտոր մը ինքնապաշտպանութեան համար, թէ ոչ. Հայ գիւղացիք երբ կառավարութեան գիտցնելով այդ յայտնի աւազակութեանց մասին կը բողոքեն և մատնանիշ կ'ընեն աւազակները՝ „մենք չենք կրնար համիդիէներու աւազակութեանց առաջքն առնել" կ'ըսեն ու մէջէն դուրս կ'ելնեն։

Ահա եկաւ գարունը, հայ ժողովուրդը բուական յոյսերով տոգորուած՝ կ'ըսպասէ անգութ Եւրոպայէն գթութեան փշրանքներ։ Երբ ժողովրդի աչքերը յառած են դէպի այդ անսիրտ դիպլոմատները, երբ ժողովրդի մտքերը զբաղուած են ներկայ դժոխային արարքներով, նոյն այդ րոպէին է որ ահա կը վերսկսին նորանոր գազանութիւններ, գողութիւններ, սպանութիւններ, կապուտ-կողոպուտներ։

Ապրիլի 24-ին խումբ մը Զխուրցի քրդեր մտնելով Բաղէշ քաղքէն կէս ժամ հեռու գտնուող Փափշէն գիւղացի Մարգար քահանայի տունը, ուր կը գտնուէր ճղեր քահանայի փեսան ևս, կը կողոպտեն տունը. երբ տնեցիք կ'արթննան ճրագ կը վառեն, անմիջապէս կը թափին քահանայի և փեսայի գլխուն. դաշոյնի ու կացինի մէկ քանի հարուածներով գետին կը փռեն, յետոյ փաթթելով փալասի մէջ կը նետեն վրանին, երբ քահանայի հարսն ու աղջիկները հեւա՛ր կը կանչեն՝ զանոնք ալ վիրաւոր գետին կը տապալեն. քահանայի 7-8 տարեկան աղջիկը լեղապատառ հազիւ դուրս կը պրծնի հաւա՛ր կը ձգէ։ Գիւղացիք մինչև անգամ չեն համարձակիր տներէն դուրս գալ, վերջապէս առաւօտը բոլորովին թալնելով կը հեռանան. Քահանան մահամերձ վիճակի մէջ էր խելագարուածի պէս քրդերէն „հաւա՛, հաւա՜" (գնա՛, գնա՛) կը պոռայ ու կը մարի։

Մայիս 2-ին Հասնանցի Համիդիէի խումբ մը՝ յայտնի յարձակումով կը մտնէ Ծաղկէ գիւղացի Պօղոս և Ուաշօ անուն եղբայրներու տուները, կը կողոպտէ բոլոր գոյքն ու կայքը, աւարի կ'առնէ բոլոր տաւար-ոչխարները, երբ կիներն ու աղջիկները կըմկսին լալ, գոռալ՝ կը կապեն բոլորին, կը փակեն տուներու մէջ ու կը հեռանան։ Ասոնք Հասնանցի աշիրէթի ցեղապետներէն Րըզախ աղայի հրոսակներն են, որոնք բացարձակապէս կը թալնեն նոյնիսկ քիւրդ գիւղերը, կըսպաննեն, կը բռնաբարեն և կառավարութիւնը չուզեր բնաւ զսպել, կամ առաջն առնել իսկ։ Տեսնենք թէ վաղը կամ միւս օր կարգը ո՞ր հայերուն և կամ ո՞ր գիւղերուն կը հասնի։

Կառավարութիւնը փոխանակ գէթ առերևոյթս այս անօրինակ գազանութեանց առաջքը առնելու ձեռնարկ մը ընելու, յայտնի խաղերով ուժ, միջոց կուտայ այդ բարբարոս արարքներուն։

Ախլաթի բոլոր գիւղերը զօրքերով լեցուեցան, չգիտենք ի՞նչ երազներ կը տեսնէ կառավարութիւնը։ Մութը տիրելուն պէս հայ գիւղացիներուն արգիլուած է տուներէն դուրս գալ։ Ճամբաները կը հսկեն, պատահող ճամբորդները, կարաւանները կը թալնեն, ո՞վ կը համարձակի բողոք ընել. կամ որո՞ւ բողոքել։

Դատվան (Ախլաթի գլխաւոր նաւահանգիստ) գիւղի մէջ կան վաթսուն զօրքեր։ Զօրապետը կանչելով գիւղի ռէս Թառօյին անամօթաբար կըսպառնայ „կամ կին կը բերէք ինձ և կամ գիւղը կ'աւերեմ"։ Միթէ՞ գիւղ մը աւերելու համար միջոցներ կը պակսին։ Մէկ քանի սատմօյ զրոյցներ յեղափոխական անուան տակ և ահա ամբողջ գաւառ մը ոչնչութեան կը մատնուի։ Մայիս 3-4-ի գիշերը այս զօրապետը Աշոտի (Աշոտը հայդուկ էր, որ այրուեցաւ Սիմոնի հետ վանքագի մէջ) այրի կնոջ տունը կը պաշարէ քանի մը զօրքերով, յեղափոխականներ փնտռելու պատրուակով։ Կինը զգալով իր դառն վիճակը՝ կ'ուշաթափի, կը մարի. տան ծառան կը յաջողի երդիկէն դուրս ելնել և քանի մը երիտասարդներու տեղեկացնել։ Կը յաջողի Աշոտի կինը չանուր դուրս քաշել ու ազատել։ Առաւօտուն զօրապետը քանի մը գիւղացիներ հարցա-

քննութեան կ'ենթարկէ, «ինչո՞ւ հակառակ մեր տուած հրամաններուն դուրս ելած էք տուներնէդ» կ'ըսէ և դաշոյնով կը յարձակի Պօղոս անուն հայի վրայ, զոր հազիւ կ'ազատեն։

Բաղէշի մէջ քանի մը զօրք փէդայիի ձևով հագուելով կը պահուին քաղաքի մօտ ձորակի մը մէջ. Մկօ անուն լրտեսի միջոցաւ կանչել կուտան Աւեր մէյտան անուն թաղէն՝ Բօչէ, Սեյրովբ անուն և քանի մը ուրիշ երիտասարդներ, որոնք հեռուէն ուրախութեամբ մը «բարով, բարով» կը պոռան և կը մօտենան կարծելով թէ իրօք փէդայիներ են։ Սակայն անմիջապէս հասկնալով իրողութիւնը կ'ուզեն փախչիլ, հեռանալ՝ իսկոյն կը պաշարուին զօրքերէն, կը ձերբակալուին ու կը տարուին բանտ։

Ահա Ախլաթի ընդհանուր դրութիւնը, ահա կառավարութեան օյինները, ահա այս գոյութեան կռուի մէջ հայ ժողովուրդի ամէնօրեայ տագնապն ու վիճակը. մենք կորցուցեր ենք մեր ուշքն ու միտքը, մենք շուարած ենք այդ անտանելի դրութեան առջև, գլխաւորապէս միայն այն պատճառով որ զուրկ ենք մարտական ուժերէ, զուրկ ենք ձեռնհաս գործիչներէ, մեր բաժինն է միայն մահը. . . Այս պարագային մեր արեան պատասխանատուութիւնը կը ծանրացնենք այն զգայուն սրտերու վրայ, որ գէթ չթողնեն մեզ անպատիւ ու անվրէժ մահուան գիրկն իյնալ։

# ՆԱՄԱԿ ԲՈՒԼԱՆԸԳԷՆ

12 Մայիս 1902

Բուլանըգի ընդարձակ գաւառը մէկ քանի քիւրդ աշիրէթներէ շրջապատեալ՝ ենթարկուած է ամէնօրեայ հալածանաց, բռնաբարումի, աւարառութեանց ու անվերջ ոճրագործութեանց։ Երբեք Հայաստանի ոև է գաւառ չէ մատնուած այնչափ ողբերգական թատերաբեմի, որչափ Բուլանըգի գաւառը։ Հոս շարունակաբար կատարուող զարհուրելի արարքները նկարագրել շատ դժուար և առայժմ մեզ համար գրեթէ անկարելի է։ Համառօտակի ընդհանուր հայեացք մը ձգելով այդ գաւառի վրայ կ'ուզենք ծանօթացնել մեր հայ եղբայրներուն այդ դժոխքը, ուր ցարդ իրար ետևէ և ամէն օր կատարուած են գիւղային փլուզութիւններ, որոնք բոլորովին խուլ և անլսելի մնացած են։

Բուլանըգի գաւառին տիրող տարրը գլխաւորաբար Հասնանցի կոչուած քիւրդ համիդիէներն են, որոնք յայտնի են իրենց աւարառութիւններով, յարատև ընդհարումներով։ Ասոնք սուլթանի ամենասիրելի հերոսներն են. ասոնց ամէն մէկ դժոխային արարքը անքննաքարելի, աններելի է։ Այս աշիրէթի ցեղապետները բացարձակ բռնութեամբ, առանց թրքական օրինական գործողութեան իսկ, տիրացած ու բնակութիւն հաստատած են հայ գիւղերուն մէջ։ Քիւրդ աղային կը պատկանի հայի հողն ու ամէն ունեցածը, հայի գոյութիւնն ու պատիւն իսկ։ Քիւրդ աղան գիւղի մը տիրանալէ յետոյ, այլևս կառավարութիւնը իրաւունք չունի հոն մտնելու, նոյնիսկ կապալի, ոչխարահամարի, տուրքերու ու հարկերու համար պէտք է դիմել քիւրդ աղայի կամքին ու հրամանին։ Այս դրութեամբ հիմա Բուլանըգի բոլոր հայ գիւղերը լեցուած են այդ վայրենի, ինքնակոչ հիւրերով։ Որովհետև քիւրդ ցեղապետները ամէնօրեայ ընդհարումներու կռիւներու ենթակայ են՝ իւրաքանչիւր աղան հարկադրուած է պահել իր հրամանի ներքև հարիւրաւոր ծառաներ, տալով բոլորին հագուստ, ձի, զէնք, ուտեստ, մինչև անգամ անոնց ընտանեաց բոլոր կերակուրները։ Այդ անտաշ, աշխատութեան բնաւին անընդունակ բարբարոսները կը բնակին հայ տուներու մէջ։ Այժմ հայը որ չունի իր բնակավայրէն զատ բնակութեան ուրիշ շէնք, անպայման կերպով պարտաւոր է պահպանել իր ընտանեաց ծոցը, թոնիրի կողքին քիւրդ ընտանիք մ'ալ, կարկտնել անոնց հագուստները, կերակրել զանոնք, պահել անոնց ձիեր, ոչխար-տաւարները և անոնց կեանքի վայելքի համար ամէն զոհողութիւն ընելը՝ նուիրական պարտք մը դարձած է հայի համար։ Քիւրդ ցեղապետներու համար դիւցազնութիւն կը համարուի միշտ կռուիլ իրար հետ, և իրարմէ խլել ժառանգական իրաւունք սեպուած այս կամ այն հայ գիւղը։ Այսպիսի ընդհարումներու ժամանակ հայերը պարտաւոր են վճարել անոնց փամփուշտներուն գինն անգամ։ Հայ գիւղացին իրաւունք չունի իր աղջիկն ու զաւակն ամուսնացնել առանց աղայի կամքին։ Կը թողունք անցեալի մէջ կատարուած անվերջ բռնաբարումներ, յայտնի առևանգումներ, բռնութեան և ճնշման տակ եղող կրօնափոխութիւններ և միայն ներկայիս մէջ կատարուած մէկ քանի քստմնելի արարքներով կը բացատրենք Բուլանըգի ընդհանուր վիճակն ու դեռ շարունակուող կացութիւնը։

Մայիս 2-3-ին Հասնանցի քիւրդ ցեղապետներէն Ըրզախ աղան Խանօղլի հայ գիւղին վրայ այնքան ճնշումներ ի գործ կը դնէ որ գիւղացիք կը ստիպուին թողնել տուն ու տեղ, հող ու ջուր և հեռանալ. այդ պարագային Ըրզախ աղան դիմելով Մանազկերտի բերդը, կառավարութեան կը բողոքէ հայերու դէմ. «հայերը յատուկ դիտումով կը հեռանան, ես իւրաքանչիւրի վրայ մեծ առնելիքներ ունիմ, եկէք վերադարձուցէք» կ'ըսէ. ո՞ր կառավարական պաշտօնեան կը համարձակի աղայի խօսքին ու կամքին հակառակ բան մը արտասանել։ Խանօղլի գիւղացւոց բոլոր բողոքները անլսելի կը մնան, ծեծի ու սպառնալեաց ներքև յետս կը վերադառնան։ Գիւղը դեռ չհասած, ետևներէն Ըրզախ աղան ալ կը հասնի. ժողվելով գիւղացիներու գեղեցիկ սեւէն եօթ հարսներ կը լեցնէ տուն մը. կը սկսէ նախճիրը. ծեծի տակ կը լլկէ; բոլորն ալ ուշաթափ գետին կը փռուին. դուրս կ'ելլէ և կը հրամայէ ծառաներուն ներս մտնել։

Նոյն օրեր միևնոյն աշիրէթի ցեղապետներէն Մէհմէտ Էմին աղան, Շէյխաղուպ հայ գիւղացիներէն կը պահանջէ բարէ բոլոր լուծքերը տանիլ և իր համար առանձին կալուածս ընել։ Գիւղացիներէն Սահաթ Գրիգորեան անուն հայը, չլսելով աղայի հրամանը, կը գնայ իր արտը վարելու։ Աղան անմիջապէս ծառաներ ուղարկելով կը հրամայէ արտի մէջ սպաննել. խեղճ գիւղացին հեռուէն տեսնելով այդ վայրենիները կը զգայ իր վիճակի դառնութիւնը, կը թողու արօրն ու մաճը՝ կը փախչի։ Քրդերը կը հետապնդեն, մէկ քանի հրացանի գնդակներով կը վիրաւորեն, հայը կը յաջողի հասնիլ գիւղի մէջ և ինքնայ ուժասպառ։

Տէրըքի հայ գիւղացիք անցեալ տարուընէ իվեր դատ բացած են Ըրզախ աղայի դէմ, որ կը պահանջէր հայերէն գիւղն իրեն յանձնել. կառավարութիւնը քաշքշելով ու քաշքշելով յետաձգեց հայերուն վճռական պատասխան մը տալ։ Ըրզախ աղայի եղբայրը Ֆէդուլլահ պէյը, որ համիդիէի գայմագամն է, մէկ քանի քիւրդերու կը հրամայէ գնալ և ի նպաստ Ըրզախի վկայութիւն տալ թէ

„Երկու հազար հինգ հարիւր ոսկւոյ գումար մը պահանջ ունի Րըզախ աղան Տէրըբէի ճայերէն“. կը տրուի այդ վկայութիւնը, բայց դատը կը մնայ անորոշ։ Գիւղացիք հարկադրուած կը պահեն 50-60-է աւելի կանոնաւոր զօրքը. չեն համարձակիր երբեք գիւղէն հեռանալ. մասնաւորապէս պարտըգլըմէն համարուածները բոլորովին բանտարկութեան դատապարտուած են իրենց տներու մէջ։ Մոռացած ապրուստն ու հայրը՝ կը ջանան կերպով մը իրենց գոյութիւնը քարշ տալ. չեն վարեր, չեն հնձեր, միայն կըսպասեն կոտորելու, սպանելու, կողոպտելու համար։ Անցեալ աշունէն իվեր Տէրըբէն սպաննուած են երեք հայեր, որոնց անունները այսօր չկրցայ ստուգել։

Նոյն աշիրէթի ցեղապետներէն Սիւլէյման աղան այնքան կը նեղէ Լաթալը հայ գիւղացիները որ բոլորը կը գաղթեն և Ոնուսի մէջ բնակութիւն կը հաստատեն։ Անցեալ ամրան գիւղացիները ցանքերը քաղելու կը վերադառնան։ Սիւլէյման աղան նոնոց գալը լսելով՝ ծառաներով կ'իջնէ գիւղ, ուր հայերը չունենալով ընտանիք, տնական կահ-կարասիք, միայն երիկ մարդիկ, չեն կրնար, սովորութեան համաձայն, պատուել կերակուրներով ու նուէրներով։ Քրդերը կերակուր ընելէ յետոյ կը հեծնեն ձիերը ու կը հեռանան։ Դաշտի մէջ կը պատահին Օհաննէս անուն երիտասարդի մը, որ սայլով ցորեն բերելու կ'երթար. կը յարձակին վրան, հրացանի գնդակներով կը ծակծկեն երիտասարդի մարմինը և դիակը ցուկելով սայլի վրայ, կը հեռանան։ Գոմէշները սայլը կը տանին ուղղակի արտը, ուր հնձողներ կարծելով թէ քնած տղան, կը կանչեն որ արթննայ և չթողնէ գոմէշները ցորենի դէզը ուտեն, երբ շարժում ու պատասխան չեն գտներ, կը վազեն ու կը տեսնեն Օհաննէսի արիւնաթաթախ դիակը։

Ահա վերջին օրինակ մ'ալ քիւրդ տարրի բարբարոս, վայրենի, և թիւրք կառավարութեան թոյլ, անզօր և անամօթ նկարագրին։

Մանազկերտի բերդի մէջ կը բնակի կանոնաւոր զօրաց հրամանատար մը։ Վերոյիշեալ Րըզախ աղան տեսնելով քիւրդ հրամանատարի գեղեցիկ աղջիկը՝ միջոցներ կը փնտռէ ձեռք բերել զայն։ Հրամանատարի տուն գտնուող սպասուհի հայ կինը կանչելով, կ'առաջարկէ միջնորդի դեր կատարել։ Սպասուհին շուարած կը մնայ երկու կրակի մէջ։ Վերջապէս իր սպասաւորութեան մէջ անհաւատարիմ չգտնուելու համար, կը յայտնէ հրամանատարին իրողութիւնը։ Րըզախ աղան լսելով հայ կնոջ արարքը՝ ծառաներով կը պաշարէ անոր տունը. կ'առևանգէ պառաւ կինն ու անոր հարսները. այդքանով չբաւականացած՝ կը պաշարէ հրամանատարի տունն ալ և կը բռնաբարէ անոր աղջիկն ալ։ Հաւար կը հասնի զօրաց. ընդհարում տեղի կ'ունենայ. երկու զօրք վիրաւոր կ'ըլլան, Րըզախ աղան կը յաջողին ձերբակալել։ Հետևեալ օրը հրամանատարը վախէն իր տունն առնելով կը հեռանայ, իսկ Րըզախ աղան ազատ կ'արձակուի... ըստ սովորութեան։

Մանազկերտի բերդը կը պատկանի Րըզախ աղայի եղբօր Ֆէզուլլահ պէյին, թէև հոն կայ կառավարական զօրաց բանակ մը, թէև գայմագամանիստ է, սակայն ամէն մէկ որոշումներու համար պարտաւոր են դիմել Ֆէզուլլահ պէյին կամ ցեղապետներու կամքին ու վճռին։

Ահա այս յայտնի ու դժոխային ծրագրերով մեծ Մարգասպանը բնաջինջ կ'ընէ հայ գիւղերը, կ'ոչնչացնէ հայ տարրը, կը պղծէ հայ ընտանիքի սրբութիւնն ալ պատիւը։

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԷՆ

18 մայիս 1902

Տնտեսական վիճակը հետզհետէ կը վատթարանայ. արհեստաւորները ամենայետին նիւթական անձկութեան մէջ՝ օրը օրին ապրելու վրայ միայն կրցան խորհիլ. կարելի չէ ոևէ նոր ձեռնարկի կամ ճարտարարուեստի նոր ճիւղի փորձ մը ընել։ Դրամական և ընկերային յոռի պայմաններու հետևանքով, տեղական արտադրութիւնները բացարձակապէս յետնեալ վիճակ մը ունին, ու շահ չեն կրնար արտադրել։ Գործաւոր դասակարգը հազիւ թէ ապրելու չափ սնունդի մը անհրաժեշտ օրողչէքը կրնայ ձեռք ձգել։ Բարեբախտաբար այս տարի ձմեռը մեղմ անցաւ, եթէ ոչ սովալլուկներու վոհմակը պիտի բազմապատկէր. կարելի է երբ աղքատաճանաչափ կամ երբ վիճակագրութիւն նկատել տեղւոյս աղքատախնամ ժողովի գործառնութիւնները, որոնք տարուէ տարի կնճռոտ ու տխուր հանգամանք մը կըստանան դիտողին համար։ Դասակարգերու տարբերութիւնը գտնել այս երկրին մէջ շատ դժուար գործ է, այնքան որ ամէնքն ալ հաւասարապէս անկուտի վիճակ մը ունին։

Երկրին մէջ անցուդարձը բոլորովին դադրած է. ոևէ անցագիր առնողի համար հարկ է որ 6-7 հոգի անձնապէս երաշխաւորեն։ Հոս այս տարուան զօրքերը, որոնք տարեգլուխէն (մարտ) ալ երկու ամիս ետքը պիտի հաւաքէին ըստ օրէնի կամ ըստ սովորութեան, փետրուարի մէջ հաւաքել սկսան ամենայն սաստկութեամբ, մնացածներն ալ մինչև մայիս պիտի հաւաքեն վերջացնեն կ'ըսուի, և սակայն զինուորականներու և քաղաքային պաշտօնեաներու դիզած ամսականները չէ տրուեցան Կուրպան պայրամի առթիւ։

Տուրքերը գանձելու համար հարկահանները կը խորհին և կը գործադրեն նոր եղանակներ, որոնք ինչպէս կարգին հանճարեղութեան դրոշմը կը կրեն։ Տան կահ-կարասիները յափշտակել սովորական դարձած է գիւղերը. բարեբախտաբար արդէն շատեր զուրկ են արժէքաւոր գոյքեր ունենալէ։ Գանձման կերպերուն մէջ զուարճալի կողմերն ալ չեն պակսիր, ինչպէս՝ Մթնիձգիւղ, 10-15 անձեր 3-4 օր նեղ սենեակի մը մէջ բանտարկուեցաւ նաև, հարկահանները երբ կը համոզուին թէ կուտ մը գանձելու իսկ ճարը չի կայ, կը հանեն զանոնք իրենց բանտէն ու բռնի ջութակ զարնել տալով պարել կուտան։ Դերջանի գիւղերէն մէկին ամբողջ նախիրը գայմագամլըղը (Մամախաթուն) կը տանին, 30 ոսկի գանձելի տուրքի մը փոխան աճուրդով ծախելու համար, ամբողջ 150-ի չափ եզ, կով, ձի, ոչխար էլն։ Գիւղացիները նեղը մնացած փոխառութեան կը դիմեն ու հազիւ թէ ծանր տոկոսով կրնան 20 ոսկի մը մէջտեղ բերել. կը տանին կառավարութեան, որ մնացորդ 10 ոսկին ալ կը պահանջէր գանձել, ու երբ ալ անկարելի կըլլայ այն ալ վճարել, բոլոր անասունները կէս արժէքով կը ծախուին ու ամբողջ դրամը տուրքերու ի հաշիւ կը տրուի։ Ուրիշ գիւղի մը մէջ ով որ անկարող կ'ըլլայ պարտքը վճարել, ձմրան ցուրտին դուրսը կը հանեն խոշոր յարդի սակառի մը տակ կը դնեն ու վրայէն պաղ ջուր կը լեցնեն օրական 2-3 անգամ։ Տուեալ ծեծերու մասին գրել անգամ

ջուրմեր, անոր զանազան տեսակները հաճարակ բոյներ կը դարձեր կեն...

Անցեալ իրիկուն քանի մը զինուորներ, զէն ի ձեռին, քաղաքիս Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ ժամուրին վըան կը յարձակին, „կեավուրլարը քեսէճէկիզ պուալով", քանի մը երիտասարդներ հազիւ կարող կ'ըլլան զիրենք կեցնել մինչև ոստիկանութեան հասնելը, որ գալով զինուորները աղաս կարձակէ. այդ պահուն տեղի ունեցածը կրնաք երևակայել. եկեղեցական արարողութիւնը կը խանգարուի, կիները վայնասուն կը փրցնեն, իրարանցումը ամբողջ քաղքին մէջ կը տարածուի, կարծելով թէ դարձեալ թիւրքերը հայերուն թաղը յարձակեր են։

Այս օրեր Պամպրդի կողմերն ալ հարստահարութիւնները իրենց ծայրագոյն աստիճանին հասեր են, այնպէս որ երկու հայ գիւղեր, 500 հոգիէ բաղկացած, չի կրնալով տոկալ տուրքերու գանձումին համար ի գործ դրուած ճնշումներուն՝ խոյամութիւնը ընդունելու տրամադիր կը ցուցնեն զիրենք. ու այնպէս քանի մը օր յետաձգելէն ետք, երբ որ քաղքէն թիւրք մոլլաներ, զատ ... պատշաճի, ձևակերպութիւնը կատարելու կերթան, գիւղացիները տեղւոյն կառավարչին աղերսագիր մը կուտան թէ կը փափաքին հաւաքաբար կուսակալին ներկայանալ, իրենց իրական վիճակը անձամբ հասկցնել կարենալու համար. գործը կուսակալութեան կը տեղեկագրուի ու չենք գիտեր տակաւին թէ ինչ հրամանք տրուած ու ինչ կարգադրութիւն եղած է։

Իսկ օրական կեանքին մէջ, գիւղերը կամ քաղաքը, եղած բռնաբարութիւններուն չափ չի կայ. ամէն մէկ քայլափոխիդ, ան ատական կեանքի զայրացնող անիրաւութիւններ կը կրկնուին ու կը կրկնուին ինչ և է պարագայի, հայ անունը կը բաւէ իր վրայ հրաւիրելու համար կամ հայհոյութիւն մը, կամ արհամարհոտ վարմունք մը, կամ ծեծ մը, կամ նախատինք մը։ Մէկը որ քիչ մը արժանապատուութեան զգացմունք կը կրէ, անկարելի է որ դիմանայ օրուան մէջ անհատներու կողմէ եղած զրկանքին ու հալածանքին. ատելութեան ու վրէժխնդրութեան նոր խաւ մըն է որ կը բարդուի ու կէ զգալուն հայի հոգիին խորը։

Հոս 20-ի չափ բանտարկեալներ ունինք քաղաքական յանցանքով, որոնց վիճակը իրապէս աղէտալի թշուառութիւն մը կը ներկայէ, թէ՛ իրենց երկարատև բանտարկութեան, նոյնքան իրենց չքաւորութեան ու երևակայելի բանտային ամենայոռի պայմաններուն պատճառաւ։ Մարդկային զոհեր, որոնք ճիշդ կենդանի թաղուածի մը կը նմանին, սա տարբերութեամբ որ, իրական թաղուած մը մէկ երկու ժամէն հրաժեշտ կուտայ կենդանական աշխարհին. իսկ ասոնք տասնեակ տարիներու մէջ ... դանդաղօրէն ու հաւաստի կերպով իրենց փճացումին իրական ու բարոյական մահուան ականատես ըլլալու դժբախտութիւնը ունեցեր են։ Այդ տասը տարիներու մէջ 20-30-ի չափ ալ մահեր տեղի ունեցեր են բանտի նկուղներու մէջ. արդէն բանտարկեալներէն կէսէն աւելին ֆիզիքապէս բոլորովին քայքայուած են ու մնացածներն ալ իրենց թարմ երիտասարդական շրջանն փճացուցեր են ու կը փճացնեն այդ գարշելի վայրին մէջ։

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

13 յունիսի 1902

Հինգ օր առաջ Շէյխ Մարգլէկցի քիւրդերը (Շարաֆ բէյի մարդիկ) կողոպտեցին Խոյի մօտերքը գտնուող պարսկական Փ ա ս ա կ գիւղը ու տարան 100 տան ամբողջ ոչխար-տաւարը։ Վերադարձին ճանապարհին հանդիպելով դէպի Անթարը գնացող կարավանին՝ թալանեցին նրան։ Այդտեղ գտնւում էին երկու զինագործ հայեր՝ Բարա և Շահէն անունով. նրանց գոյքերն ու իրեղէնները առնելուց յետոյ երկուսին էլ սպանեցին։

Բայազէտից գրում են, որ տաճիկ զօրքերը վերսկսել են իրենց անկարգութիւնները պարսկական սահմանագլուխներում. անցեալ աշնան էր որ մի քանի ընդհարումներ տեղի ունեցան Աւաջիկի խաների, տաճիկ զօրքերի ու խուժանի միջև. երկու կողմից էլ սպանութիւններ եղան. վերջապէս դրութիւնը հանդարտուեց։ Այժմ կրկին Ջէքի փաշայի եղբայրը շարունակում է իր օյինները. նա արդէն պարպել է մի մեծ պարսից սահմանի վրայ գտնուած Բ ա լ ա ս օ ր անունով գիւղը և տաճիկ զօրքերը կենտրոնացրել է այդտեղ։ Պարսից խաները անզօր են խնդիր յարուցանելու ու դիմադրելու, իսկ կառավարութիւնը անճարակ ոչ մի կերպ չի կարողանում կարգի բերել սահմանի այդ կնճռոտ խնդիրները։ Այդպիսով նա կամաց կամաց խրախուսում է տաճիկներին առաջ շարժուելու ու բռնութիւններ գործելու։ Բայազէտում ապրող խեղճ պարսիկ հիւպատոսը չի իմանում ինչ անի. նա ճնգիւ իր գլուխն է պահում. ո՞վ է լսում նրա ձայնը, գանգատը, բողոքը. քանի՜ անգամ անպատուել են խեղճին։ Անտէր մարդ է, ի՞նչ անի. եթէ մի քիչ էլ յանդուգն լինի, արդէն փ է ր թ ե ր ը կը հանեն, վայը իր գլխին կը գայ...

Զկիրիէ գաւառի (Տիգրանակերտի կուսակալութեան հարաւ-արևելեան կողմը) յայտնի ասպատակիչ Համիդիէի գայմագամը՝ Միրանցի քիւրդ ցեղապետ Մուստաֆա փաշան բռնել բանտարկել է, ցմահ բանտարկութեան վճիռ տալով։ Իր տան գոյքը տաճիկ կառավարութեան կողմից աւարի է մատնել։

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱԼԱՇԿԵՐՏԷՆ

I

3 ապրիլ 1902

„Գայլը ամպ օր շուտ կուգայ". — Ալաշկերտ և Բայազէտ գաւառակները, եօթ տարին անգամ մը աւրուելէն ետք նոր աչք բացեր և քիչ մը շունչ առեր էին՝ յանկարծ 95 թուականի Բ. Դռնէն դուրս եկած հայերը կոտորելու ֆ ե ր մ ա ն ի անմիջական գործադրութեան անձնվէրներ սպասող խուժմը ազգը՝ իր ըմբռնական փոխանակներով, գաւառիս հայաբնակ գիւղերու և գիւղաքաղաքներու մէջ թափելով կրկին անգամ աւերեցին, փարախներու մէջէն տաւարաոչխարներու հօտեր յափշտակեցին, դաշտերու մէջ հնձողները մորթելով՝ հասունցած արտերը հրոյ ճարակ ըրին, վերջապէս անագորոյն Համիդի սպանդանոցի դագաղ զարնող ողորմելի հայերը, մի անգամ հանգստութեամբ նոր ու արև չտեսան...

Մարտ 3-ին Զիլանցի աշիրէթի ցեղապետ ...

Երէց փաշայի եղբօր որդին Թաշիմ բէկը կէս հօխայ սապօնը բանի առնելու միջոցին՝ սպաննեց Մանկասար գիւղացի Ցպրըշի Մարտօնը և անոր 15 տարեկան որդին: Մերձակայ Թարպ-Քիլիսէ գիւղաքաղաքի կառավարիչը առ երեսս ոճրագործը ձերբակալելու համար, հետապնդըղ հեծելազօրքը միշտ դուրս կը հանէ, որոնց միակ նպատակն ալ արդէն մինչև հայոց գիւղերը հասնիլն և անոնց հացով իրենց սովալլուկ փորերը կշտացնելն է: Թէպէտ կառավարութենէ ալ ղրկուած ըլլան զօրքերը՝ անոնց յատկապէս պատուէր կը տրուի իսլամական կրօնի պարտքը լիովին վճարող մը ըլլալ, չձերբակալել և հայերը տարօրինակ ճնշումներով տանջել: Որովհետև քաջ գիտեն որ այլևս հայերը գաղթելու անարգ ճանապարհը պիտի չտեսնեն, մերժեր են այդ ստորնութեան ուղին և մինչ ի մահ ընտրած են քրտինքը և արիւնը միմեանց հետ խառնելով տոկալ, իրենց ագարակը վարել և անով իրենց հացը պատրաստել: Արդարադատ կառավարիչը սպանուողներու պղջտ գերդաստանին 3 ոսկի ծախքն վճարել տուաւ: Կառավարութեան ամբողջ հեղինակութիւնը ուրեմն ատոր մէջ սահմանափակուեցաւ, աւելցնելով թէ՝ «մի վախնաք, ամէն եզը ձեր տանը մէջ այսպիսի ցէպքեր չպիտի տեղի ունենան... Բայց դո՛ւք ալ խոհեմ եղէք քանի որ ժամանակը գէշ է»:

Բաշալէտը Արարատեան նահանգի արևմտեան հարաւային ծայրն է, քաղաքի և իր գաւառակի մէջ կը բնակին Զէլալցի և Հայտարցի ըսուած քիւրդ ցեղեր, այս ցեղերու պետերը (էլ-աղասի) ունին առանձին կազմուած աւազակային խմբեր, որոնք շարունակ Ռուսիոյ և Պարսից սահմանները ապստակելով բազմաթիւ աւարներով կը վերադառնան իրենց էլ-աղասիներուն գիւղը: Եթէ կառավարութիւնն ալ հասկնայ, մաս մ՚ալ անոր բաժին կը հանէ, որով կը գոցէ խաղաղութիւնն վրդովող բերաններ: Անցեալները Բայազէտի մերձակայ Արծափ հայաբնակ գիւղի գիւղապետ Գալուստի եղբօրորդի Պօղոս անուն երիտասարդը սպաննեցին Հայտարցի Սէյիտ աղայի վրանի մօտ, իսկ մարմինն ալ անդամ-անդամ յօշոտուած վրաններէն հեռու Տաղկոտ (Ալա-տաղ) լերան խոր վհերուն մէջ գտնուեցաւ: Կառավարութիւնը ոճրագործէն բանի մը ոսկի փախցնելու յուսով ուզեց ձերբակալել զայն:

Գաւառիս ամբողջ հայաբնակ գիւղերը զօրքերով լեցուած են, անթիւելի տառապանքներ հայերու վրայ թափելէ զատ՝ հայ կանայք և աղջիկներ ալ բանի իրենց ծնողներու և ամուսիններու գրկէն կը խլեն: Անցեալ և ներկայ տարուան մէջ բանի թիւրքացուցին երկու աղջիկ և մէկ կին Մուսուն գիւղէն, Իւչ-Քիլիսեցի Եղիազարեան Նուարդ աղջիկը և Խօնճալեցի Տէր-Յովհանէսեան Գոհարը, ամուսնացեալ:

Փետրուար 23-ին Ալաշկերտի Ամատ գիւղի մէջ բնակող զօրքը, տեղւոյն Գրիգոր անուն հայի աղջիկը բանի կը փախցնէ, սակայն գիւղի տանուտէր Յովհաննէսի քաջալերական խօսքերը և յաւաջ վազելը՝ տեղական երիտասարդութեան գրգռելով՝ դծրաց եռեէ կը պնդեն գերիվարեալն յետ կըստանան, այդ միջոցին երկուստեք կռիւը կանչուշտ տեղի կունենայ, ուր կը վիրաւորուին զօրքերէն երեք հոգի, իսկ հայերէն ոչ մէկ: Թօփրագ-Կալէի կառավարութիւնը այժմ՝ գիւղի հայերէն 9 անձինք բանտարկելէ զատ՝ յետ առնուած աղջիկն ալ կը պահանջէ:

Հայ անուն կրող ճանապարհորդի մը գինդէ գիւղ երթալը խստիւ արգիլուած է. արգիլուած է նաև երկու մարդկանց միմեանց հետ խօսելն անդամ, համբերէ բրդոց և կանոնաւոր զօրաց գործ դրած ոճիրներն միմեանց հետ խաչաձևելով կը տրջին կատարածի յագուրդանքն գոհացնել:

Ի

13 ապրիլ 1902

Նախապաշարուած մոլեռանդներու վրայ հոգևորականութեան ազդեցութիւնը չարաղէտ եղած է միշտ և ամէն տեղ: Նոյն բան դժբաղդութիւն ունի քրդական ցեղերուն համար ալ, որոնց վրայ շատ զօրաւոր կերպով կ՚իշխեն բազմաթիւ շէյխեր: Այս հոգևորականութեան թիւը հետզհետէ կը շատնայ ու երկրին ամէն անկիւնները անոնցմով կը վխտան:

Խըզլըֆայէն, Մէքքէյէն, Մէտինէյէն ու սուրբ երկրէն մանէն տեղեկութիւններ կու գան անոնք և իսլամին փառաւոր գլխաւորին նկարագրութիւնը կ՚ընեն:

Այդ տեսակ տեսարանի մը ականատես եղայ անցեալ օր. շէյխ մը հայ գիւղէ մը կանցնէր: Շէյխը ինք, նիհար ձիու վրայ նստած էր, գլուխը սև քօղով սքողուած և սպիտակ վերարկուով փաթթուած: Բիւրդ ամբոխը, տասնէ աւելի փախրիններու առաջնորդութեամբ շէյխին կը հետևէր, ալա՛հ, ալա՛հ, ալա՛հ, եա՛ Ալի, եա՛ Մէհմէդ սարսափելի գոռում գոչիւններով: Այս արարողութիւնը չորս հինգ ժամուան ճամբայ կը շարունակուի, կատղած գազանի նման բերաննին փրփրեցնելով: Հայը ողջ թողնել, անոր հետ խօսիլ, իսլամին և սրբազան ղուրանին համար ամենէն մեծ սրբապղծութիւնն է շէյխերու քարոզածին համեմատ:

Իսլամական այս հրէշային մոլեռանդութիւնը հայերը սարսափի մէջ ձգած է: Վերջերս մանաւանդ հայ տարրին նկացութիւնը շատ սուր կերպարանք ստացած է. սահմանները անթիւ զօրքերով ու քիւրդ համիդիէներով լեցուած են: Կարինէն եօթը-ութը վաշտ զօրք հոս պիտի տեղափոխուին. փոքրիկ առիթ մը բաւական պիտի ըլլայ ամէն բան տակն ու վրայ ընելու համար:

Պայազէտի բանտարկեալներէն Տ. Յակոբ քահանան և Խաչատուր անունով մէկը յաւիտենական բանտարկութեան դատապարտուեցան:

Կառավարական պաշտօնեաներուն դէպի հայը ունեցած թշնամութեան չափ չկայ, մեղապարտութիւնն ու ոճրագործութիւնը անհրաժեշտ է ըլլ հայի վզին ծանրացնեն: Պէտք է ամէն տեսակ տանջանքի ենթարկել զայն, ջարդ ու փշուր ընել, սպաննել, բնաջնջել: Եւ անտարակոյս քիւրդը այս տրամադրութենէն լիովին կ՚օգտուի, ազատ ասպարէզ տալով իր բոլոր չարիքներուն ու եղեռնագործութիւններուն:

Քանի մ՚օր առաջ, սուլթանի վայրագ զինուորները օխայ մը աղիճրի համար աղքատ և մուրացիկ հայ մը սպաննեցին դաշոյնի ահռելի հարուածներով:

Հայ գիւղերուն մէջ զօրքերուն թիւը երթալով կը շատնայ, ընկերացած միշտ համիդիէներու արիւնարբու վոհմակներուն: Տարաձայնութիւնները բազմաթիւ են, ինչ մտադրութիւն ունենալնին գաղտնի կը մնայ: Տուրքերը խիստ ծանր են և անոնց պահանջումը մորակի անգութ հարուածներով կը կատարուի: Վերջապէս հային համար կեանքը անկարելի դարձած է վայրենութիւններու այս հեռաւոր աշխարհքին մէջ:

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՍ

Այս տարի վերջացան երկու նշանաւոր պատերազմներ՝ չինա-եւրոպականը և անգլօ-բօերականը։ Երկուսն էլ մղւում էին հեռու Եւրոպայից, երկուսի էական պատճառն էլ նոյնն էր—Եւրոպայի նուաճողական ձգտումը և դիմադրողների ինքնապահպանութեան տենչը։ Երկուսի վախճանն էլ նոյնը եղաւ—պարտութիւն դիմադրողների համար։

Բայց ի՜նչ ահագին տարբերութիւն։

Մի տեղ կռւում էր աշխարհիս ամենամեծ և ամենահին ազգը՝ թւով 400 միլիոն, և կռւում էր ոչ միայն իր կատարեալ անկախութեան, այլև ինքնուրոյն զարգացման համար։ Միւս տեղ՝ հազիւ 1 միլիոն բնակիչ ունեցող երկու փոքրիկ հանրապետութիւններ էին պատերազմ վարում ներկայիս ամենահզօր պետութեան, ծովերի թագուհի Բրիտանիայի դէմ, որ հաշւում է 390 միլիոն բնակիչ։

Չինաստանում պատերազմը տևեց 8 ամիս և 100,000 դիսցիպլինի վարժ ու լաւ զինուած եւրոպա-ճապոնական բանակը ջախջախեց մի քանի հարիւր հազարաւոր չինական զօրքը, որին միացած էր չին հայրենասէրների միլիոնաւոր բանակը։

Աֆրիկայում 30 հազար անձնւէր „գիւղացիների" միութիւնը դիմադրեց 200 հազար անգլիական զօրքին, նշանաւոր յաղթութիւններ տարաւ և... պատճառելով Անգլիային գրեթէ 5 հազար միլիոն ֆրանկի ահագին ծախքը, հասցրեց նրան վերջին հարիւր տարւայ ընթացքում չտեսնուած ֆինանսական տագնապի։

Չինաստանը զրկւեց իր մեծ, թագաւորական տան համար նւիրական Մանջուրիայից, աւերւեց ու կողոպտւեց „ճերմակ սատանաներից", վճարեց մօտ 2 հազար միլիոն ֆրանկ պատերազմական տուգանք։

Հարաւ-աֆրիկեան հանրապետութիւնները կորցրին իրենց քաղաքական անկախութիւնը, բայց պահեցին ներքին ինքնավարութիւն, ոչ միայն չվճարեցին տուգանք յաղթողներին, այլ ընդհակառակը ստացան 30 միլիոն ֆրանկ իրենց աւերուած կալւածները վերականգնելու համար։

Չինաստանը կրեց անպատւութիւն, նւաստացաւ։ Հայրենասէր բօքսէրների պարագլուխներին նա յանձնեց թշնամուն՝ մայրաքաղաքի հրապարակի վրայ գլխատելու համար։ Նա աքսորեց թագաժառանգի հօրը՝ Թուանին և զօրքի հրամանատար Տունֆուսեանին։ Գլուխը ծռած, թէև վրէժխնդրութեամբ լի, չինացին հարկադրուած է այսօր համակերպել յաղթողների բոլոր պահանջներին, ընդունել նրանց և լաւ և վատ հրամանները։ Ոչ ոք չգիտէ հաստատապէս, կը պահէ՞ արդեօք իր միութիւնն ու անկախութիւնը այդ վիթխարի և ամենահին պետութիւնը։

Բօէրները „de jure" յաղթւեցին, բայց „de facto" յաղթեցին։ Նրանք ստիպեցին թշնամուն յետ վերցնել արուած սպառնալիքները և կատարեալ ազատութիւն տալ բոլոր կռւողներին, շատ քիչ զիջելով „ապստամբ անգլիացի հպատակների" վերաբերմամբ։

Բօէրների հրամանատար Բոտան, Դիլարէն, Դէվէտ խոստովանում են այսօր, որ թէև անկախութիւնից զրկւելու թղթի ստորագրութեան օրը ամենածանր օրն էր իրենց կեանքում, թէև նրանք ցած դրին զէնքերը և իջեցրին իրենց դրօշակը, բայց էլի մնում են նոյն բօէրները, չեն հրաժարւում իրենց աւանդութիւններից ու սովորութիւններից։ Այս խօսքերի հետ հաշտւում է նրանց թշնամի Չամբերլէնը, քաջ կռւողներին հօլլանդացիների հետ միասին ծափահարում են և անգլիացիք։

Տարակոյս չկայ, որ վաղ թէ ուշ ամբողջ հարաւային Աֆրիկան կազմելու է մի մեծ ու հզօր աֆրիկեան դաշնակցութիւն, Աւստրալիայի և Կանադայի պէս, որի կապը մայր երկրի հետ լինելու է անւանական և հիմնւած միմիայն փոխադարձ շահերի վրայ։ Ո՞վ աւելի մեծ դեր կը խաղայ այդ ապագայ մեծ պետութեան մէջ, անգլիական ցեղը թէ՞ հօլլանդականը—դա հարց է։ Յամենայն դէպս, եթէ մի հարիւր տարուց յետոյ Աֆրիկական Դաշնակցութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգների պէս մտնէ մրցութեան մէջ և սպառնալիքներ արձակէ իր վաղեմի մետրօպօլին—XXI դարու աֆրիկանդերները „փառքով ու պատւով" միայն կը յիշեն այսօրւայ կռւող բօէրներին։ Այո՛, „փառքով և պատւով", որովհետև թզուկ լինելով հանդերձ՝ նրանք ցոյց տւին մեծ-ոգի՝ մեծ քաջութիւն ու հաստատակամութիւն, մեծ ասպետութիւն ու դիսցիպլին, գրեթէ չը տեսնուած սէր դէպի հայրենի երկրի ազատութիւնը։

Այդ յատկութիւնների շնորհիւ էր, որ փոքրիկ ու անյայտ բօէրները պատմութեան մէջ դարձան մեծ և նախանձելի բոլորի համար. այդ յատկութիւնների բացակայութիւնն էր, որ ընկճեցրեց ծերացող արևի գոռող ազգին։

Դեռ պատերազմից առաջ, երբ անգլիացոց միջամտութիւններն ու Ջեմսոնի արշաւանքը մի կողմից և Կրաօ Զաուլի գրաւումն ու անվերջ եւրոպական արտօնութիւնները միւս կողմից՝ գուշակել էին պայիս երկու երկրների ինքնուրոյն կեանքին սպառնացող փոթորիկը—Աֆրիկայում ու Չինաստանում նկատւում էր չափազանց տարբեր վերաբերմունք դէպի ինքնապաշտպանութեան միջոցները։ Երբ սիրոյ գաղափարի և մակաբայեցւոց պատմութեան վրայ կրթւող բօէրները զարգացնում էին ամբողջ երիտասարդ սերնդի ֆիզիքական ու զինւորական ճարպկութիւնը, ուսուցնել էին տալիս նրան տեխնիքական ամենավերջին նորութիւնները—չինացիք իրենց փրկութիւնը որոնում էին կղզիացման մէջ, կրթութեան ամենամեծ ուժը տեսնում էին Կոնֆուցիոսի գրուածքների սքօլաստիքական մեկնութիւնների մէջ և իրենց գլխաւոր յոյսը դնում՝ պատերազմի Աստծու անձամբ կատարելիք զոհաբերութիւնների վրայ։

Վերջին տարիներս, երբ բօէրների պետութիւնը զբաղւած էր լուռ ու մունջ զինւորական պաշար դիզելով և ցեղակից պետութեան հետ դաշնակցութիւն կապելով, չինացի մանդարինները վիճում էին միմեանց աստիճանները որոշող գնդակների մասին և խոշոր կաշառքներ առնելով՝ հայրենի երկրի արտօնութիւնները մաս մաս ծախում էին իրենց թշնամիներին։

Պատերազմը անխուսափելի դառնալուն պէս փոքրիկ հանրապետութիւնները մի հոգի և մի մարմին դարձած՝ բռնում են յարձակողական դիրք և հէնց սկզբից հասցնում թշնամուն զգալի հարւածներ, կենտրոնացնելով պատերազմը հակառակորդի հողի վրայ։

Պատերազմի նոյն շրջանում չինական իշխանական տան մի մասը գլուխ է կանգնում հայրենասէր բօքսէրներին, միւսը ուտելիք է մատակարարում պաշարւած դեսպան-

ներին՝ նահանգապետներից մէկը ռմբակոծում է Ամուրի ափերը, միւսը թէյ խմում թշնամի հիւպատոսների հետ: Հիւսիսում հայրենասէրները ընկնում են հազարներով, հարաւում ժողովուրդը զբաղուած է առօրեայ աշխատանքով և չգիտէ նոյնիսկ պատերազմի մասին:

Պատերազմի երկրորդ շրջանում, երբ գրաւեցին Պրետորիան ու Պեկինը, երբ ապացուցուեց ուժերի անհաւասարութիւնը և ճակատ առ ճակատ կռուի անկարելիութիւնը, — փոքրիկ բօէրները, յանձնելով ագարակները կանանց, պատերազմի դաշտն են հանում բոլոր ուժերը, նախագահից սկսած մինչև 14 տարեկան տղաները և կանոնաւոր պատերազմը վերածում միանգամից համարեա անկախ, այլևայլ կազմ խմբակների անկանոն կռուի: Քարուքանդ անելով երկաթուղիները, կողոպտելով պաշար տանող գնացքները և անակնկալ յարձակումներ գործելով այս ու այն յարմար դէպքում, բօէրները ձգձգում են պատերազմը ամսից ամիս տարէց տարի և, կարծես, անվերջանելի են ուզում դարձնել: Այլ է դրութիւնը Ծայրագոյն Արևելքում. „Իշխանական" տունը Պեկինից փախչում է երկրի խորքերը, շատ քիչ ուշադրութիւն դարձնելով պատերազմի ելևէջներին: „Մեծին հնազանդուելու" սկզբունքը իրենց կուռք դարձրած կառավարիչները հէնց առաջին պարտութիւնները կրելուց փախչում են աջ ու ձախ: Հայրենիքի սէր չունեցող զինուորները տեղ-տեղ դառնում են աւազակներ ու կողոպտում միևնոյն երկիրը: Հարաւի նահանգապետները հրաժարւում կամ դանդաղում են զօրք ուղարկել վտանգի ենթակայ հիւսիսին, հսկամարմնի արածը քանդւում է երկչոտը և մի քանի ամսում մեծ երարխիական Չինաստանը կորցնում է իր գլուխը, ենթարկւում է կատարեալ անիշխանութեան:

Յաղթութեան հաւատացած բօէրներին վախկոտ ու ֆանատիկոս չինացին գազանութիւններ է կատարում ձեռքը ընկած քրիստոնեաների և եւրոպացիների վրայ, սովամահ անում դեսպանատների մէջ պաշարուած կանանց ու երեխաներին և բնական զզւանք յարուցանում ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մէջ. Մինչդեռ պատերազմում քաջ բօէրները գթով խնամում են իրենց ձեռքերն ընկած վիրաւորներին, նոյնիսկ ազատ թողնում թշնամու վիրաւոր ու գերի բռնուած զօրապետին և իրենց ասպետական վարքով արժանանում են ամբողջ աշխարհի բուռն համակրութեանը:

Հետևանքը ակներև է:

Մեծ թւով բայց փոքր ոգով Չինաստանը մի քանի ամսում յաղթւում է ֆիզիքապէս ու բարոյապէս և մնում խայտառակ խորամանկ դիպլոմատների և փարիզեցի միսիոնարների ձեռքում:

Փոքր թւով, բայց մեծ ոգով բօէրները յաղթւում են առերևոյթս, բայց յաղթում իրականապէս: Շնորհիւ իրենց բարոյական բարձրութեան, համբերատարութեան և հաւատարիմ վճռականութեան, նրանք պահպանում են իրենց ինքնավարութիւնը և հաւասար իրաւունքները յաղթողի հետ:

Իրենց եզակի, դիւցազնական կռուով բօէրները տւին պատմական մեծ դաս թէ հզօր պետութիւններին և թէ փոքրիկ ճնշուած ազգերին. Նրանք ցոյց տւին, թէ ինչ վիթխարի գործօն է բարոյական ուժը և թէ ինչ գնով կարելի է գնել հայրենիքի ազատութիւնը:

# Թ Ն Բ Թ Օ Ն

## ՀԱՅԱՍԵՐՆԵՐԻ ԿՕՆԳՐԷՍԸ

(ՆԱՄԱԿ ԲՐՅՈՒՍԵԼԻՑ)

Առաջին անգամն է, որ Հայաստանի վեհանձն բարեկամները զանազան երկրներից համախմբւում են՝ ընդհանուր խորհրդակցութեամբ հայ ժողովրդի տառապանքներին դարման գտնելու:

Հայասէրների այս առաջին կօնգրէսը կատարելապէս յաջողուած պէտք է համարել և, ինչպէս որ գուշակում էր մեր թանկագին բարեկամ Ֆրանսիս դը Պրեսանսէն՝ նա ունեցաւ Եւրոպայի մէջ աւելի մեծ շառաչիւն, քան թէ սպասում էինք: Անարժան մամուլի ներկայացուցիչ մի քանի թերթեր Գերմանիայում ու Ռուսաստանում՝ ղեկավարուած ամենաստոր նկատումներից՝ ճգնում են նսեմացնել կօնգրէսի նշանակութիւնը, ճգնում են մեղմել հայոց աղէտները և դրա հետ մեղմել սուլթանական պատասխանատուութիւնը. Փոյթ չէ: Հայկական դատը ունի իրեն պաշտպան՝ բոլոր երկրների ազնիւ, անկաշառ մամուլը, որը այսուհետև պիտի չմոռանայ աւելի ազդու ճչալ լսեցնել պաշտօնական Եւրոպային քաղաքակիրթ ժողովուրդների հոգատանջ ողբը:

Կօնգրէսը գումարուելը՝ նոյնիսկ Բելգիական ազատ հողի վրայ՝ շատ էլ դիւրին չէր: Պէտք եղաւ յաղթահարել մի շարք խոչընդոտներ: Թիւրքական ագենտները գործի վրայ էին. Ելդըզը հրահանգել էր ամեն միջոց գործ դնել՝ կօնգրէսը վիժեցնելու: Բելգիական կառավարութեանը ապարդիւն դիմումներ անելուց յետոյ՝ Միւնիր պէյի մարդիկ որոշել էին կաշառել բոլոր պանդոկապետներին: Կաշառման գործը ըստ երևոյթին աջող էր գնում, որովհետև շատ տեղերում իմաց որ մերժեցին կազմակերպող Յանձնաժողովին:

Դահլիճը յանուամենայնիւ գտնուեց և սուլթանական ծառաները ֆիասկօ կրելով՝ իրենց արգահատանք միայն յարուցին Եւրոպացի հայասէրների մէջ:

Շերբէկ կոչուած արուարձանում La Tourelle ընդարձակ սրահի մէջ յուլիս 17-ին, 150 հոգու չափ երկսեռ բազմութեան ներկայութեամբ բացւեց համաժողովը: Շերբէկի քաղաքագլուխը իր հովանաւորութեան տակ է առել հայասէր կօնգրէսը: Սրահում տիրում է մեծ կենդանութիւն: Աչքի են ընկնում եւրոպական պերճախօսութեան փայլուն աստղերը՝ Ժան Ժօրէս, Էմիլ Վանդերվելդ, տիկին Սեվըրին: Կան գիտութեան ու հրապարակախօսութեան այնպիսի պատկառելի ներկայացուցիչներ, ինչպէս Էլիզէ և Էլի Ռեկլիւ, Ֆրանսիս դը Պրեսանսէ, Բերնար Լազար եւն:

Սրահի մուտքի առջև ոստիկաններ են դրուած, որոնք հսկում են շրջակայքում վխտացող թիւրք լրտեսների վրայ: Հռչակաւոր Նիկոլայիդէս, ոսկու փայլից կուրացած այդ ստոր ճիճուն ցրւել է տալիս կօնգրէսիստներին իր աղտոտ թերթի (L'Orient) համարները, ուր ներբողւում է սուլթանի հայրախնամ կառավարութիւնը Հայաստանում:

Սրահի մէջ հանդիսականներին բաժանում են „Դրօշակ"-ի խմբագրութեան և Հնչակեան կենտրոնի ներկայացրած զեկուցումները, ապա մի քանի բրոշիւրներ, որոնց թւում՝ Բերնշտայնի տպած բանախօսութիւնը՝ „Հայ ժողովրդի տառապանքները և Եւրոպայի պարտաւորութիւնները" խորագրով:

Սենատոր Հ. Լաֆօնտէնն է նախագահում. Նա

ողջունում է մի՛ հազարաւոր մարդկանց, որոնք Եւրոպայի բոլոր երկրներից իրենց կողմնակցութիւնն են յայտնել հայկական դատին. շնորհաւորում է մասնաւորապէս դանիացիներին, որոնք նախաձեռնող եղան ներկայ ժողովին։

Ապա կարդացւում են կոնգրէսին ուղղուած մի շարք համակրական նամակներ ու հեռագրեր՝ Կլեմանսօյից, Դ'Էստուրնել դը Կոնստանից, դը Ռոբերտիից, Գաբրիէլ Սէայից, Ջեմս Բրայսից, Մակ-Կոլից, Էդուարդ Բեռնշտայնից, «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւն»-ից և հայկական գաղութներից՝ Եգիպտոսից, Բուլղարիայից, Բուկովինայից, Ամերիկայից։

Այնուհետև բեմ է բարձրանում «Պրո Արմենիա»-ի խմբագրապետ Պ ի է ռ Ք ի ա ռ և գահլիճի խորին ուշադրութեան մէջ արտասանում է իր յուզիչ ճառը։ Պարզ հանգարտ, առանց ծայրայեղ ու մոլեգին դարձուածների՝ վերլուծում է նա հայկական դժոխային իրականութիւնը։ Փաստերը՝ գրեթէ ամբողջապէս քաղուած պաշտօնական աղբիւրներից՝ ցնցում են հանդիսականներին։

Հայկական հարցի լուծման համար երեք հնարաւորութիւն կայ, ասում է Քիառ.

1) Ժողովրդի կատարեալ բնաջնջում.

2) Հայաստանը Ռուսաստանին միացնելը.

3) Վարչական ռեֆորմներ։

Հայերին Ռուսաստանին յանձնելուց՝ զեկուցանողը ոչ մի բարիք չի սպասում բազմատանջ ժողովրդի համար։

Մնում է ուրեմն վարչական ռեֆորմների ճանապարհը. և այստեղ Քիառ պաշտպանում է «Դրօշակ»-ի խմբագրութեան մշակած ծրագիրը, որը անցեալ տարի ներկայացուած էր մինիստր Դելկասէին և որը պահանջում է, ի միջի այլոց, հաստատել Հայաստանում եւրոպական չէզոք մի ազգութեան պատկանող կառավարիչ։

Բուռն ծափահարութիւնների մէջ Պիէռ Քիառ իջնում է ամբիոնից։ Նրանից յետոյ բեմ է դուրս գալիս Սեվրին և մի ազդու ճառով նշաւակում է մամուլի այն ներկայացուցիչներին, որոնք վաճառականական սուտ նկատումներով՝ լռութիւն էին պահում հայկական սարսափների ժամանակ։

Հետևեալ օրը երկար ու բարակ խորհրդակցութիւնից յետոյ՝ կոնգրէսը որոշում է ընտրել մի յանձնաժողով, որը թէ պիտի կապ հաստատէ զանազան երկրներում գործող հայասէր կոմիտէների մէջ և թէ միջոցներ պիտի ձեռք առնէ՝ ազդելու հանրային կարծիքի, պարլամենտների ու կառավարութիւնների վրայ։

Այդ յանձնաժողովի անդամներ ընտրուեցին.

ՖՐԱՆՍԻԱՅԻՑ.— Դընի Կօշէն, Լավիս, Դ'Էստուրնէլ դը Կոնստան, Սենիբա, դը Պրեսանսէ, Վաժէյ։

ԲԵԼԳԻԱՅԻՑ.— Լըժեօն, նախկին մինիստր, Հուզօ դը Լենէ, սենատի անդամ, Լաֆոնտէն, պարլամենտի անդամ։

ՀՈԼԼԱՆԴԻԱՅԻՑ.— Շէպման, Տրոլստրա, Լիֆտինգ, Վաալ, Մալֆիտ, Վանդերֆլուգտ։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ.— Լուդվիգ ֆօն Բար, Փօրստեր, Բեբէլ և Բեռնշտայն։

ԻՏԱԼԻԱՅԻՑ.— Էնրիկօ Ֆէրրի և Մօնետա։

ԱՆԳԼԻԱՅԻՑ.— Սկօտ Հօլլենդ, Նօրմէն, Մակ-Կօլ, Բեզընտ, Հարդի, Ջէմս Բրայս, Բրօնտինգ, Ստեֆենսոն, Պէզմոնդ։

ԱՒՍՏՐԻԱՅԻՑ.— Բարոնուհի Զուտներ և դոկտոր Ադլէր։

ԴԱՆԻԱՅԻՑ.— Հէնրինգս, Հալ, Բեննիկսէն։

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻՑ.— Ֆարել և Կիւրտէն։

Երկրորդ օրուայ հետաքրքրական մասն էին Ժօռէսի և Պրեսանսէի ճառերը։

Ժ օ ռ է ս ամբիոն բարձրանալով՝ յայտնեց որ Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցութեան անունից է խօսում.

«Ուրախ եմ, ասաց հռչակաւոր տրիբունը, որ հայկական հարցը դուրս է գալիս մթութեան ու անտարբերութեան շրջանից։

«Սկզբներում, երբ խնդիրը դրուած էր երկերկչոտ կերպով, պ.պ. Դընի Կօշէն, դը Մէօն և ես վրդովւեցինք, տեսնելով մամուլի մի խոշոր մասի լռութիւնը՝ Փոքր Ասիայում կատարւող մասսային գազանութիւնների դիմաց։ Այդ գծում, թուրքական մամուլը լուռ էր մնում, որովհետև եթէ քննէր փրողութիւնները, չպիտի համարձակուէր փաստաբանել յօգուտ սուլթանի։

. . . . . . . . . . . .

«Ցաւալի ես լսում եմ, թէ ինչպէս ժողովուրդներ կարեկցութիւնը հակադրում են կառավարութիւնների յանցաւոր անտարբերութեանը... Ժողովուրդները, որքան էլ թէ յուզւում էին միջազգային այդ մեծ ոճիրներից, նոյնքան յանցաւոր են իրենց անտարբերութեամբ, որքան և կառավարութիւնները, և այդ իսկ պատճառով դառնում են այդ վերջինների մեղսակից։

«Այստեղ 61-րդ յօդուածը պարզ վկայում է մեր պահանջների օրինաւորութիւնը։ Նրանով մենք կարող ենք իրականացնել համաձայնութիւնը՝ ազգերի իրաւունքի և մարդկային խղճի ձայնի։ Նրանով մենք հրաւիրում ենք կառավարութիւններին՝ յարգել մարդկութիւնը և յարգել իրենց։

. . . . . . . . . . . .

«Կամաց-կամաց պատրանքները փարատւում են, նաև խաղաշարժումները մեղմանում։ Մի քանի ժամանակ գերմանական սոցիալիստական կուսակցութիւնը վարանող դիրք ունէր հայերի վերաբերմամբ։ Նա կարծում էր, թէ ագիտացիան գալիս է դրսից։ Նա Ռուսաստանի ձեռքն էր տեսնում այստեղ, որովհետև այդ խնդրում, ինչպէս և սպիրիտիզմի յայտնի ժողովների մէջ մի որոշ ժամանակ թւում էր, թէ անյայտ ձեռքեր շարժւում են դէպի ամէն կողմ։

«Բեռնշտայնի յօդուածները, ճառերը և իր նամակը փարատում են այժմ ամէն երկդիմութիւն։ Գերմանական ժողովրդի աչքերը բացուած են և Ռէյնի միւս կողմի մեր սոցիալիստ եղբայրները արձագանք կըտան մեր հրաւէրին։

«Ի՞նչպիսի դիրք կը բռնէ արդեօք Ռուսաստանը Հայաստանի վերաբերմամբ։ Ես համարձակւում եմ ասել, որ նա կախուած է Ֆրանսիայի բռնելիք դիրքից։ Առանց այդ երկու ազգերի նորայի միջամտութեան՝ հնարաւոր չէ ֆրանս-ռուսական դաշնակցութիւնը, քանի որ նա հիմնուած չի լինի արդարութեան և մարդկային անքակտելի իրաւունքների վրայ։

«Կրկնում եմ, մենք չենք ուզում պատերազմ, որովհետև նրանով մենք թռիչք կը հաղորդէինք որսի բոլոր թռչուններին, որոնք հսկում են մեծ թագաւորութիւնների ծոցում։ Մենք պատերազմից աւելի լաւ բան ունենք մեր ձեռքում, մենք ունենք դիւանագիտական մի բնագիր։

«Ես կարող եմ պնդել առանց թեթև հայրենասիրութեան, որ Ֆրանսիայի վրայ մեծ յոյսեր ունեմ՝ Եւրոպայի հանրային կարծիքը հաւաքական գործունէութեան հրաւիրելու համար։

«Նա շուտով կը կրկնապատկէ հիւպատոսների թիւը Հայաստանի մէջ։ Դա մի սկզբնաւորութիւն է. չպէտք է նա կանգ առնէ ճանապարհին, այլ պէտք է աւելի հեռու գնայ, եթէ չի ուզում դաւաճանել պատմական այն օրինագրքին, որը դարերից ի վեր կապում է նրան աշխարհի ճակատագրի հետ»։

Դահլիճը որոտագին ծափահարութիւններով համակրութեան ճիչեր է անում հռետորին։

Ֆրանսիս դը Պրեսանսէ հետեւում է նրան։ Նուազ պերճախօս, բայց խոր հիմնական ծանօթութիւններով եւ քաղաքագէտ-մտածողի պատկառելի տեսքով՝ Պրեսանսէն հմայում է հանդիսականներին։

„Խնդրի միջազգային բնաւորութիւնն է, որ այսօր համախմբել է մեզ այստեղ եւ նրա մասին է, որ պիտի խօսիմ։ Մեր քուէարկած որոշումով արձանագրում ենք, որ ֆրանսիական ու ռուսական հիւպատոսարանների թիւը աւելանում է Հայաստանի մէջ։ Այդ վերջին քայլը ինքնաբերաբար չկատարուեց, այլ հետեւանք էր այն դիմումների, որ պարլամենտի մի քանի անդամներ արին Դելկասէին, հիմնելով իրենց պահանջները այն հանգամանքի վրայ, որ Փոքր Ասիայի կոտորածները (՚96) չեն ունեցել մինչեւ օրս։ Մինիստրը ուղարկեց հիւպատոսական գործակալներ եւ խոստացաւ բացի այդ՝ շրջապատել խժդժութիւնների կենտրոնը պահակետների մի գօտիով, որոնք պիտի հսկեն հրաբխային վայրի վրայ եւ պիտի ձեռք առնեն անհրաժեշտ միջոցներ՝ ժայթքումների առաջն առնելու համար։ Մենք պահանջում ենք, որ բոլոր պետութիւնները ձեռք առնեն նոյնանման միջոցներ։

„Եւրոպական ազգերը Բեռլինի դաշնագրով դրել են սուլթանի վրայ որոշ պարտաւորութիւններ։ Յանկարծակի բոլոր դիւանատները դադարեցին հսկելու նրանց գործադրութեան վրայ։ Այն ժամանակ մարդիկ հարցրին պատճառը այդ յետադարձ ընթացքի։ Պատասխանը եղաւ՝ թէ քանի որ հայեացքների տարբերութիւն է առաջացել զանազան կառավարութիւնների մէջ, պէտք է բաւականանալ գործողութեան մի մինիմումով. բաւականացան պլատոնիկներով, կիսատ քայլերով. մարդասիրութիւն էին անում եւ ոչ դիպլոմատութիւն։ Պէտք է դիմել ազդու գործողութիւնների։

„Մենք կարողացանք տեսնել պ. Դելկասէին. „Պետութիւնները չափազանց տարօրինակ մի բան են արել։ Նրանք յանկարծ թողել են Բեռլինի դաշնագրի իրաւական հողը։ Սուլթանը ուրեմն շատ դիւրին կերպով կարող է ասել ինքն իրեն. „քանի որ ինձնից չեն պահանջում ոչ մէկը այն երաշխաւորութիւններից, որ ես պարտաւոր եմ տալ, իմ պարտքն էլ չէ ձեռնարկել նրանց գործադրութեան"։

„Սուլթանը — այդ լաւ յայտնի է ամենքին — զիջանում է այն ժամանակ միայն, երբ կորովի կերպով պահանջում են նրանից նիւթական կամ բարոյական պարտքեր եւ երբ այդ պարտքերի հատուցումը ճանկագրուած է զրահաւոր նաւերով. այդ դէպքում նա հնազանդւում է։ Բայց սոսկ ազդարարութիւնները մարդասիրութեան ու ազատութեան անունով՝ նրա համար անհասկանալի խօսքեր են միայն. պէտք է գործել։

„Մեր դէմ ձեւակերպում են որոշ առարկութիւններ, որ պէտք է յետ մղել։ Մեզ ասում են թեթեւ սրտով. դուք շատ բարի դիտաւորութիւններ ունիք, բայց եղէք գործնական եւ ուրիշ ոչինչ մի պահանջեցէք՝ բացի նոր փոխանորդող գործակալներ ուղարկելուց. անհնարին է ձեզ ցանկալի իրագործուած տեսնել ուրիշ ոչ մի բան։ Շատ լաւ, մեր նպատակն է՝ գործադրել տալ Բեռլինի դաշնագիրը եւ ձեռք բերել Հայաստանում համանման բան ընդօրինակում, շնորհիւ իրաւական այն փաստագրին, որ մեր ձեռքի տակ է։

„Մի ուրիշ ճշմարտանման առարկութիւն եւս. անհնարին է, ասում են, յոյս դնել եւրոպական համերգի վրայ, քանի որ ինչպէս տեսնում էք համաձայնութիւն չկայ նրա մէջ եւ նա տապլտկում է անելանելի ճահճի մէջ։

„Ճիշդ է, որ վերջին յոյն-թիւրքական պատերազմի միջոցին եւրոպական համերգը վիժեց։ Ճիշդ է, որ գերմանական ու աւստրիական կայսրութիւնները այդ խնդրում Թիւրքիային նպաստաւոր վերաբերմունք ունեցան եւ հրաժարուեցին միջամտել յօգուտ խաղաղութեան։

„Բայց այն ժամանակ ի՞նչ արին միւս ազգերը։ Նրանք ուշք չդարձրին եւ շարունակեցին իրենց գործը։ Ֆրանսիան, Ռուսաստանը, Իտալիան, Անգլիան շարունակեցին գործել եւ յայտարարեցին Կրետէի ինքնավարութիւնը։ Պարզ է ուրեմն, որ մի ազգի թերացումը չի վտանգում միւսներին։

„Պէտք է գործել անյապաղ. չկայ ոչ մի ընդունելի պատճառ, որ մենք չաշխատենք վերջ տալ այն գազանութիւններին, որոնք արիւնոտում են Հայաստանը"։ (Երկարատեւ ծափահարութիւններ)։

Որոշումները քուէարկելուց եւ դանիացիներին ու կազմակերպող յանձնաժողովին շնորհակալութիւն յայտնելուց յետոյ՝ նախագահը յայտարարում է կոնգրէսը փակուած։

—

Մոռացանք յիշել, որ մամուլի պրօպագանդին վերաբերող որոշումը քուէարկելու միջոցին՝ տիկին Սեվերին վերցնելով իր մոլեգին պարսաւականը յայտնի մամուլի դէմ՝ առաջարկեց հետեւեալը.

„Որպէս զի մեր ընդունած որոշումը լինի գործնական, ասաց նա, ես առաջարկում եմ օրաթերթերի մի ցուցակ կազմել իրենց հրատարակիչների անուններով, որոնց կը խնդրէ անձնապէս՝ հրատարակութեան տալ հաղորդուած տեղեկութիւնները։ Այդպիսով գալ տարուայ կոնգրէսին կարելի կը լինի հրապարակով նշաւակել այն լրագրատէրերի անունները, որոնք չեն կատարի այդ խնդիրքը"։ (Բուռն ծափահարութիւններ)։

Բրիւսէլը նշանակեց կեդրոնավայր, ուր կը գումարուի յաջորդ տարուայ կոնգրէսը։

Պիէռ Քիառ, իբրեւ ներկայացուցիչ միայն կոմիտէի՝ պիտի հաստատէ մշտական կապ նրա անդամների միջեւ։

## ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՉԸ

„Դրօշակ"ի խմբագրութիւնը եւ Հնչակեան կուսակցութեան կենտրոնը հետեւեալ ընդհանուր կոչն են ուղղել Բրիւսէլի հայասէրների կոնգրէսին։

—

Պարոններ,

Հիացումի եւ խոր երախտագիտութեան զգացումով ողջունում ենք ձեզ կռւող ու տանջւող հայ ժողովրդի անունից։

Համաշխարհային եսամոլութեան եւ ռէակցիայի այս ժամանակներում մխիթարական է տեսնել՝ ամեն դաւանանքի պատկանող մարդկանց այդ գեղեցիկ շարքը, որոնք նպատակ են դրել փաստաբանել աշխարհի առաջ այնքան ողբերգական եւ այնքան վաղուց լքուած մի դատ։

Իբրեւ ներկայացուցիչներ հայ ժողովրդի մարտնչող մասի՝ մենք չենք գալիս պատմելու ձեզ այդ ժողովրդի

երկարատև վարտիրոսութիւնը։ Դուք ամէնքդ այդ գիտէք և, վերջապէս, կոնգրէսի մէջ հեղինակաւոր և աւելի պերճախօս ձայներ՝ կ'անեն այդ աւելի լաւ, քան մենք։

Մենք միայն թոյլտւութիւն ենք խնդրում մեր կարծիքը ևս յայտնելու կոնգրէսի բուն առարկայի մասին, բացատրելու մի քանի խօսքով մեր հայեացքները այն միջոցների մասին, որոնցով կարելի է վախճան դնել ոչնչման ենթակայ մի ժողովրդի տառապանքներին։

Պարոններ,

Մի քանի տարի սրանից առաջ հայ ժողովուրդը, նոյնիսկ նրա ամենալուսամիտ տարրերը, հաւատացած էր, թէ մի զուտ խաղաղասիրական պրոպագանդ բաւական է՝ եթէ ոչ վերակազմելու Թիւրքահայաստանը հաւասարութեան ու արդարութեան հիմքերի վրայ, գէթ իրագործելու բարեփոխումների այն մինիմումը, որ մեզ տւել է Բերլինի դաշնագիրը։

Անցքերը շուտով հաստատեցին այդ հաւատի միամիտ լինելը։ Արդարև, տարիները անցան զուր ու ցաւագին սպասումի մէջ։ Արտասահմանի մեր հայրենակիցները կազմակերպեցին միանգամայն խաղաղ մի պրոպագանդ դիւանագիտութեան վրայ ազդելու նպատակով։ Կազմում էին անդադար արձանագրութիւններ, դիմումներ էին անում արտաքին գործերի մինիստրներին, պատկերացնում էին հայ ժողովրդի անտանելի վիճակը․․․ Բոլորը ապարդիւն. դրութիւնը չէր փոխւում Հայաստանի մէջ։

Պաշտօնական Եւրոպան խուլ էր ձևանում այն ժողովրդի արդար պահանջների դիմաց, որին նա վերցրել էր իր հովանաւորութեան տակ և որը միայն մէկ բան էր պահանջում — ապրել ապահով։

61-րդ յօդւածը մնում էր ողբալի կեղծիք և միայն աւելի էր ծանրացնում հայկական ճգնաժամը, գայրացնելով բռնաւորին, հրելով նրան դէպի սոսկալի ոճիրներ, որոնք յայտնի են։

Յուսախաբութիւնը ծանր էր։ Հայ ժողովուրդը՝ սուլթանների այդ դարաւոր ու հաւատարիմ հպատակը, իվերջոյ կորցրեց իր համբերութիւնը։ „Ռայեան" ըմբոստացաւ։ Հայ ինտելիգենտները, նոյնիսկ ամենախաղաղասէրը նրանց մէջ, հասկացան վերջապէս, որ Եւրոպան արիւն էր պահանջում, որ միմիայն զինւած պայքարը կարող է մղել դիպլոմատիային դէպի միջամտութիւն։

Կռիւը հարկադրւում էր։ Պէտք էր նախ և առաջ պաշտպանել դաշտի խաղաղ աշխատաւորին ընդդէմ բարբարոսների — քրդերի կամ թիւրք զինւորների — որոնք ամէն օր խլում էին նրանից իր աշխատանքի արդիւնքը, տանջում ու մահով էին սպառնում նրան, բռնաբարում էին նրա աղջիկներին, ոտի տակ էին տալիս նրա բոլոր սրբութիւնները՝ առանց երբէք պատժւելու, կամ գէթ փնտրւելու մահմեդական իշխանութիւններից։

Այդ տեսակ հանգամանքներում ապստամբութիւնն իսկ դառնում է հրամայական անհրաժեշտութիւն։

Եւ ահա առաջ եկան կոմիտէներ՝ ժողովրդի պաշտպանութիւնը կազմակերպելու համար։ Նրանց պահանջները շատ համեստ էին. նրանց ուզածն էր ինքնավար մի Հայաստան՝ եւրոպական հսկողութեան տակ, — անհրաժեշտագոյն պայմանը երկրի բնականոն զարգացման համար։

Այդ կոմիտէները երբեմնապէս բռնում էին նաև յարձակողական դիրք, օգտւելով բարեպատեհ առիթից՝ եւրոպական միջամտութիւն հրաւիրելու։

Դուք հաւանօրէն կը յիշէք այն արիւնոտ ցոյցերը, որ տեղի ունեցան Կ. Պօլսում 1890-ին Գում-Գափուի մէջ, 1895-ին Բ. Դրան առաջ, Օսմանեան բանկի գրաւումը 1896-ին, Զէյթունի հերոսական ապստամբութիւնը 1895-ի վերջերում, Խանասորի ճակատամարտը 1897-ին, ապա հրաշալի դիմադրութիւնը անվախ Սերոբի ու իր խմբի և նրա յաջորդ Անդրանիկի, որը դեռ այս րոպէիս իր թռչկան խմբերով գտնւում է Սասունի լեռներում։

Դուք կը յիշէք նաև պետութիւնների երբեմն կորովի միջամտութիւնը, իբր հետևանք այդ յեղափոխական կռիւների։ Եղան վայրկեաններ, երբ անողոք ճակատագիրը ժպտում էր Հայաստանին. աւա՜ղ, դա միայն պատրանք էր։ Եւրոպան չդիմեց ճնշողական միջոցների — միակ լեզուն, որ հասկանալի է Ըլդըզում։ Նա գոհացաւ ձևակերպելով պլատօնական ցանկութիւններ՝ 1895 մայիս 11-ի ռէֆորմների հռչակաւոր նախագծով։

Աբդիւլ Համիդը քաջալերւած պետութիւնների գձուձ կռիւներից՝ վճռեց վերջ դնել հայկական խնդրին և հրամայեց կոտորել մեր հարիւր հազարաւոր հայրենակիցներին։

Եւ „կարգը" վերահաստատւեց Հայաստանում։ Լռութիւնը տիրեց, որպէս գերեզմանատան մէջ։ Դա ամենաահռելի հակահարւածն էր, որ երբևիցէ տւել է բռնակալութիւնը ազատութեան ձգտող մի ազգայնութեան։

Մեծ կոտորածները, մի քանի տարիների կարմիր ու ճերմակ տեռորը չկարողացան անդամալուծել հայ ցեղի սքանչելի կենսունակութիւնը։ Նա դեռ ևս կանգուն է, թէև արիւնաթաթախ։ Նա արհամարհել է երկար դարերի ընթացքում բռնագրաւողների յարձակումները, մղելով միշտ, անյաղթելի կորովով իր գոյութեան կռիւը, որ միաժամանակ կռիւն էր յանուն քաղաքակրթութեան։

Հայկական խնդիրը պիտի յարատևէ ուրեմն քանի որ նա առաջադիմութեան խնդիր է Արևելքում։ Որոշ նշաններ վկայում են նոյնիսկ, որ նա գնալով աւելի պիտի ծանրանայ։ Մասսային խողխողումները քաղաքակիրթ կոչւած պետութիւնների անտարբեր աչքի առջև՝ դժնդակ մի դաս էին հայ ազգի համար։ Այսօր աւելի քան երբևիցէ թիւրքահայը համոզւած է, որ ըմբոստացումի մէջ է իր փրկութիւնը։ Այդ յուսահատական ժխորի մէջ, ուր խեղդող քրդերի դժոխային ճիչերը միախառնւում են զոհերի հեծկլտոցների հետ — ամենաթոյլ էակն իսկ դառնում է անհրաժեշտաբար յեղափոխական։

„Ճակատագրական է թւում — ասում էր նոյն ինքը պ. Դելկասէ Ֆրանսիական պարլամենտի ամբիոնից 1902 յունւարի 20-ին, Ռուանէի հարցապնդումի ժամանակ — որ եթէ ազգաբնակութիւնները շարունակաբար և անպատիժ կերպով թալանւեն ու ենթարկւեն եղեռնափորձերի՝ նրանք իվերջոյ պիտի մտածեն, որ ամէն վիճակ լաւագոյն է քան այն կեանքը, որ գտնւում է մասսային կոտորածի մղձաւանջի տակ"։

Արդեօք այդ խօսքերը դիւանագիտական նւիրագործումը չե՞ն հայ յեղափոխական շարժման։

Գերագոյն ժամանակն է, պարոններ, հասկացնելու աշխարհին այդ վշտառիթ և անժխտելի ճշմարտութիւնը։ Հայաստանը ներկայացնում է, իրաւի, խմորումի մի ընդարձակ դաշտ, և տարօրինակ կը լինէր, եթէ ուրիշ կերպ լինէր։

Զինւած ապստամբութեան գաղափարը քանի գնում

ուելի է տարածւում. Նա անխուսափելի էնեւ միանգամայն նպատակայարմար. Նա թւում է ամենաադրւ միջոցը մեր խնդրի լուծման համար։

Մենք կոչ ենք անում բոլոր ուրիշ մարդկանց՝ ուժ տալ — Յանուն առաջադիմութեան ու մարդկայնութեան — Հայ ժողովրդի զիմադրութեանը։

Մարդասպան Համիդը գործի վրայ է։ Արդէն չարաշուք պատրաստութիւններ են տեսնւում որը ցերեկով Մուշում, Սասունում, Զէյթունում։ Վերջին հինգ տարին շարունակ հետեւողականութեամբ առաջ տանելով Հայ ազգի բնաջնջման գործը՝ տէռորի ձանապարհով, մասնակի սպանութիւններով, մասսայրին կրօնափոխութիւններով, բռնի գաղթականացումով — Եըլդըզը հիմա նորից ծրագրում է մեծ կոտորածներ։

Ձեզ է մնում, պարոններ, արգելել օսմանեան բարբարոսութեան յարձակողական դարձը։ Ձեզ է պատկանում՝ յիշեցնել շարունակաբար դիպլօմատներին՝ ներկայ և գալոց վտանգները և ձեր ազգու աջակցութիւնը բերել Հայ ժողովրդին, որը իր գերագոյն յուսահատութեան մէջ որոշած է կռւել բոլոր զէնքերով՝ մինչև իր արդական իրաւունքների յաղթանակը։

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲՈՂՈՔ
ԴՐՕՇԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
(ԺԸՆԵՎ)

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ
ՀՆՉԱԿԵԱՆ ՀԱՅ ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
(ԼՈՆԴՕՆ)

Ժընեւ, յուլիս

## ՏԷՌՕՐ

Զմիւռնիայում վերջերս տեղի ունեցած դէպքերի առիթով Հ. Յ. Դաշնակցութեան տեղական կենտրոնն մտահոգւած էր գնահատել մի քանի լրտեսների։

Դրանցից ամենայայտնին՝ Մ ա ք ս ո ւ տ Ա ս լ ա ն ե ա ն սպանւեց յուլիսի ²⁄₁₅-ին, ցերեկով, քաղաքային հրապարակի վրայ։ Տէռօրիստները ազատ են։

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

### ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացել է՝

„Զանգեզուր" 300 ֆրանք, ԿԱՐԻՆԻ „Ազատ ձանապարհ" ֆիրմ 11-ի վաճառումից 28 ֆր. 30 ս., ՓԱՐԻԶԻՑ Մարտ. Ժատ 2 ֆր. 50 ս. (5 դրամով), տիկ. Մ.-ից 1 ֆր., ՑՈՒՐԻԽԻՑ Գ. Խ.-ի միջոցով 2 ֆր. 30 ս., Փ.-ի „Առաջ" խմբից 151 ֆր. 45 ս., Միւնխենի ուսանողներից 7 ֆրանք: Գումար 692 ֆրանք 55 սանթիմ:

### ՌՈՒՄԱՆԻԱ՝

ՖՕՔՇԱՆԻՑ „Դամոկլէս" անդամակցութեան տոկոսներ, անդամներէ հանգանակւած Կիւստենջէ „Հայկական կարմիր-Խաչի".

Տիկ. տիկ. Նէմէկ 10 ֆրանք, Աշու Տաւ. 2, Պազ. Յով. 3, Մարի. Տաւ. 5, Մարգ. Սարգս. 2, Վարդ. Պօյեան 2, օր. Ռիմա Վարդ. 2, տիկ. Արամ. Աւագեան 2, Մար. Սիրական 4, Թագու. Մխիթ. 3, Մար. Խաչաթէոս. 5, Վէզիրով Ազնիւ Զարու. Պապիկ. 5, Ջոնի Իրից. 5, Անիկեան Ուսուցիչ 5, Հովիւ. Յարութ. 5, Անդրա. Փափազ. 2, Հովիւ. Գրիգոր 4: Գումար 67 ֆր.:

„Նոր Դար" խ. (տարօրէն-մայիս-յունիս) 55 ֆրանք, „Սեբաստիա" խ. 54, „Զինւոր" խ. 30, „Բաբք" խ. 31. 30, „Համազուլ" խ. 31, „Սեպուհ" խ. 36. 50, „Տարօն" խ. 32, „Կարին" խ. 34, „Վայրագ" խ. 35, Ազատասէրի ամսավճարներ 10, Գուբ-ի ամսավճարներ 4, Նուէրներ Մ. Յ. 5, Ներդասուտ մը 5: Գումար 362 ֆրանք 80 սանթիմ:

ԲՐԱՅԼԱՅԻՑ „Գուրգէն" խումբ. — Նիկոլոս 5 ֆրանք, Պիծակ 5, Աշոտ 1, Քաջայր 5, Ցարնող որդի 5, Կայծ 1, Կայծակ 3, Քարիւղ 5, Աղբիւր 5, Մուրակ 5, Շաւիղ 1, Աղուղ 5, Դուշման 4, Մուշ 15, Սմբատ 7, Շաւաւի 3, Պայթուցիկ 1, Քարտաշ 3: Գումար 73 ֆրանք: (Այս գումարից 3 ֆրանքը փոխ է նախկի զանձարանից):

### ՖԻՒԱՅԱՆՅՍՏԻ Կեդր. կոմիտէն՝

„Աշխատանք" խմբից 12 ռուբլի, „Յուսաւոր առաւօտեան" խմբ. 12, „Նաւիրեան" խմբ. 12, ապարանի „Ղարիբ" խումբը աշխարհիկ ծնողներ Մայր գիւղից „Արիւծ" խմբ. 30, Ծովագիւղից „Ալլահ" խմբ. 13, Նոր գիւղից „Հերոս" եւ „Հերմէս" խմբերից 5-ական, Հիւրընկալ գիւղից Մ. Կ. 10, Ս. Յ. 10, Կ. Գ. 5, Կ. Ա. 5, Գիրիմ օղլի 1, Յ. Ք. 5, Ա. Ք. 3, Դ. Ք. 3, Գ. Մ. 5, Ն. Պ. 3, Դ. Ա. 4: Գումար 148 ռուբլի:

ԱՓԱՍՏԱՆԻ „Հայրիք" խմբից, հաւաքւած „Ուսումնասէր" գիւղից. — Սար. Վարդ. 4 ռուբլի, Նահ. Քալ., Վար. Մարտ., Օհ. Օհա., Նահ. Աւե. 5-ական, Եղ. Բօղ., Յակ. Կորե., Իպս. Նաւ., Մկ. Եղիա., Վարդ Յովհ. 3-ական, Ծաղ. Գր., Առա. Գրէ., Սարգ. Զաքար., Օ. Սօրս., Յով. Քալ., Մինա. Օհա., Պ. Յովեփ, Յով. Ծաղ., Պետ. Գար., Յով. Տաւ., Սար. Տաւ. 2-ական, Մին. Վանել., Կար. Առա., Գալ. Դիլ., Մար. Փօլ., Անթա. Քհան., Դաւ. Քհան., Առաք. Քհան., Յակ. Տաւ., Օհ. Գոլ. Գիր. Առա., Դ. Գրիգ., Օհ. Աշոտ., Սար. Յակ., Յակ. Թադ., Գիգ. Մկրտ., Աւետ. Նուբ., Լեւոն Յով., Պետ. Բօլ., Յով. Ծաղկ., Գալ. Վարդ., Յով. Կար., Մկր. Յով., Աղ. Ավ., Մկր. Աբ., Ծաղ. Տաւ., Կատա. Տաւ., Դաւ. Գալ. մէկ-ական, Հա. Պալ. 1. 15, Օհ. Քհան. 1. 50, Տիգ. Քհան., Բաբկէն աշակերտ, Մար. Զաք., Տիգ. Եազ., Թորոս աշ., Կար. Յով., Մկ. Յովս., Լուս. Յովս., Աղա. Յովս., Թադ. Փօլ., Մար. Փօլ., Մար. Առա., Յով. Առա., Միւրց 50-ական կոպէկ, Մար. Թոս 20 կոպ., Մանուկ Քհան. 10 կ.: Գումար 93 ռուբլի 25 կոպ.:

ՁԱՂԹԱՍԵՐԻ օրիորդաց „Բեթղեհէմ-Օրինի" խմբից հանգանակւած. — Պետրոս Մ. 10 ռուբլի, Պաղտասար Զոհ. Մարգար Վէհ., Յովսէփ Եր., Արամ Զոհ. 5-ական, Սերոբէ Թոր. 4, Խաչիկ Մ. 4, Վարդուհի Հ. 2. 50, Յովհաննէս Ա., Աշոտ Բալ., Յովհաննէս Ս., Եղիազար Գ., մէկ-ական, Գրիգոր Մ. 0. 50, Յարութիւն Բ. 0. 80, Յովհաննէս Մ. 0. 20:

ՆՈՐ քաղաքի „Տիգրիս" խմբից. — Առիւծ 1. 50 ռուբլի, Արծիւ 1. 50, Աղաւնի, Տոռ Պալ, Երկաթ, Արտաւազդ մէկ-ական, Բարխուդար 0. 50, Լանէ 0. 50, Վէնեա 0. 50, „Արծիւ" խմբից. — Արմէն, Ամարանոց, Սպարապետ մէկ-ական, Անդրանիկ 0. 50, „Քաջերանց" խմբից. — Քաջավիրա, Դիւցազն, Տրդատ 1. 50-ական, Աշոտ 6, Կայծակ, Ծովուն, Տիգրան, Քրիսփի, Սասուն, Սանդրո, Արշաւանք մէկ-ական, Բարեկամ, Արուսեակ, Զօրավար, Զինւոր 0. 50-ական, Հայրուղ 0. 55, Բաբէշ 0. 30, „Զայթուն" խմբից. — Նաւասար 5, Ծովիկ 5, Մէլքիսեդէկ 3, Վասպուրականցի 2, „Շանթ" խմբից Արբակ 1: Գողթավարի Գանձակ գիւղից Թաթոսից 1.

Գումար 94 ռուբլի 85 կոպէկ:

ՍՐԲԱԳԻՐ. — „Դրօշակ" № 5-ի մէջ ՍԵՒԱՍՏԱՀԱՅԵՐԻ ցանկի մէջ Թոխմաքից „Արշակեր" խմբի պէտք է լինի „Զրահ" խ. 4 ֆրանք, փոխանակ 5 ռ.:

### ՈՍԿԱՆԱՊԱՏԻ Կոմիտէն՝

Մայիս 1-ից մինչեւ յունիս 1-ը 1903. „Մածի" խ. նախամայիսեան 10 ռուբլի, „Արմաւիր" խ. 10, վերադարձից 58, „Սեւեակ" խ. 21, պատճէններից վաճառումից 10. 50, „Արամայիս" խ. 36 դամանից 7, „Սերոբ Աղբիւր" խ. անդամավճ. 68, „Մանուկ" խ. անդամավճ. 3, „Քաջազն" խմբ. անդամավճ. 20, „Արշ" խմբից 3000, „Շէյխ-Շամիլ" խ. անդամավճ. 25. 4: Գումար 3233 ռ. 14 կ.:

## ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

## ԱՄՓՈՓՈՒԱԾ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(ԱՐՏԱՏՊՈՒԱԾ „ԴՐՕՇԱԿ"-ԻՑ)

Գինն է 50 սանթիմ, ձանապարհածախսով 60.

Նամակներ ուղարկել հետեւեալ հասցէով՝

Rédaction du „Droschak", Genève (Suisse)